

Էրտողան Շարունակեց Թուրքիոյ Ժխտողական Քաղաքականութիւնը

Հայոց ցեղասպանութեան 104-րդ տարելիցին թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայյիպ Էրտողան հերթական անգամ ի ցոյց ողջ աշխարհին առաջ տարաւ թրքական պատմագիտական-դիւանագիտական սուտը ու հերքեց հայերու դէմ իրականացուած ոճրագործութիւնը:

Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրէս»-ը, թրքական արխիւներուն նուերուած գիտաժողովի ընթացքին, իր ելոյթին մէջ Էրտողան, անդրադառնալով Առաջին աշխարհամարտի տարիներուն կատարուածին, յայտարարած է, թէ հայերը կոտորած են իսլամ կիներն ու երեխաները, ու նման պայմաններու մէջ «հայ հրոսակներուն ու անոնց աջակիցներուն աքսորելը ամենատրամաբանական վարքագիծը եղած է»:

Չհեռանալով Հայոց ցեղասպանութեան մասին ցուցաբերուող աւանդական թրքական ժխտողականութենէն՝ Էրտողան յայտարարած է, որ իրենց արխիւներուն մէջ կան մեծ թիւով փաստական տուեալներ, եւ այդ տուեալները նախ հետազոտողները պէտք է ուսումնասիրեն, եւ ատկէ ետք միայն քաղաքական գործիչները հանդէս գան յայտարարութիւններով:

Անդրադառնալով Ֆրանսայի կողմէ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ դիրքորոշման՝ Էրտողան ըսած է. «Բոլոր անոնց, որոնք հայկական հարցի շուրջ կը փորձեն մեզի մարդու իրաւունքներու վերաբերեալ դաս տալ, ամէն անգամ ստիպուած ենք յիշեցնել անոնց արիւնոտ անցեալը»:

Պիլսոյ Սէջ Թուրք Ոստիկանները Արգիլած Են Ցեղասպանութեան Նուիրուած Սիջոցառումը

Թուրքիոյ ոստիկանութիւնը Պոլսոյ Սուլթանահմէտ հրապարակին վրայ երկրորդ տարին ըլլաով կ'արգիլէ Հայոց ցեղասպանութեան տարելիցին նուիրուած միջոցառման իրականացումը: Այս մասին կը յայտնէ Bianet.org-ը:

Միջոցառման իրականացումը թոյլ տալու վերաբերեալ Մարդու իրաւունքներու ընկերութեան համանախագահ Էրէն Քեսքինի բանակցութիւնները ոստիկանութեան հետ ապարդիւն անցած են, ինչի հետեւանքով ներկաները ստիպուած եղած են հաւաքուիլ Պէյօղլու

Հայաստանի Ժողովուրդն Ու Ղեկավարութիւնը Յարգանքի Տուրք Սատուցեցին Հայոց Ցեղասպանութեան Զոհերու Յիշատակին

Ապրիլ 24-ին, Հայաստանի Հանրապետութեան ղեկավարութիւնն ու ժողովուրդը Միծեռնակաբերդի յուշահամալիրէն ներս յարգանքի տուրք մատուցեցին Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

Յուշահամալիր այցելեցին ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան, վարչապետ Նիկոլ Փաշինեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեան, ոստիկանապետ Վալերի Օսիպեան եւ կառավարութեան անդամներ: ՀՀ նախագահին, վարչապետին եւ ԱԺ նախագահին կ'ուղեկցէին անոնց տիկիները:

Բարձրաստիճան պաշտօնեաները ծաղիկներ խոնարհեցին Ցեղասպանութեան զոհերու յիշատակը յաւերժացնող անմար կրակին մօտ: Ապա, Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետութեամբ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ հոգեւոր դասի մասնակցութեամբ: Հաւաքուածները գլուխ խոնարհեցին եւ մէկ վայրկեան լուռութեամբ յարգեցին զահուած 1,5 միլիոն հայերու յիշատակը:

Ապրիլ 24-ին յիշատակի արարողութիւններ կը կատարուին Հայաստանի բոլոր շրջաններուն, Արցախի եւ աշխարհի տարբեր երկիր-



Հայաստանի ղեկավարութիւնը Միծեռնակաբերդի յուշահամալիրէն ներս յարգանքի տուրք կը մատուցեն Ցեղասպանութեան զոհերու յիշատակին

ներու հայկական համայնքներուն մէջ: Բողոքի կոչեր բարձրացան թուրքիոյ մերժողական քաղաքականութեան դէմ եւ ուղերձներ չղուեցան միջազգային հանրութեան՝ ճանչնալու 20-րդ դարասկիզբի մեծագոյն ոճրագործութիւնը:

Ամբողջ օրը Միծեռնակաբերդ բարձրացան օտար երկիրներու դիւանագիտական ներկայացուցիչներ, քաղաքական տարբեր գոր-

ծիչներ, սփիւռ. քահայեր եւ տասնեակ հազարաւոր քաղաքացիներ:

Վարչապետի Ուղերձը

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը Հայոց ցեղասպանութեան 104-րդ տարելիցի առթիւ իր ուղերձին մէջ ըսաւ.

«Այսօր մենք յարգանքի տուրք

Տասնեակ Հազարաւոր Հայեր Արդարութիւն Պահանջեցին Լոս Անճելըսի Թրքական Հիւպատոսարանին Առջեւ



Հազարաւոր հայեր համախմբուած Լոս Անճելըսի թրքական հիւպատոսարանին առջեւ

Չերեքշաբթի, Ապրիլ 24-ի կէսօրէ ետք, տասնեակ հազարաւոր Լոսանճելըսահայեր համախմբուած էին թրքական հիւպատոսարանին առջեւ դատապարտելու եւ արդարութիւն պահանջելու՝ Հայոց ցեղասպանութեան զոհերուն համար:

Հայկական ցեղասպանութեան Յիշատակութեան Միացեալ Մարմինի կազմակերպութեամբ կայացած հանրահաւաքին ներկայ էին մեծ թիւով երիտասարդներ, դպրոցական ուսանողներ, կրօնական ու

Նախագահ Թրամի Կրկին Օգտագործեց «Մեծ Եղեռն» Եզրոյթը

Ապրիլ 24-ին Սպիտակ Տունը տարածեց Միացեալ Նահանգներու նախագահ Տրամպի թրամփի յայտարարութիւն Հայոց ցեղասպանութեան 104-րդ տարելիցին առթիւ: Ինչպէս իր նախորդները՝ թրամփի եւս չօգտագործեց «ցեղասպանութիւն» բառը ու բաւարարուեցաւ «Մեծ Եղեռն» եզրոյթով:

Յայտարարութեան մէջ մասնաւորապէս նշուած է.

«Այսօր մենք կ'ոգեկոչենք Մեծ Եղեռնն ու բոլոր անոնց յիշատակը, որոնք տառապած են 20-րդ դարու ամենասարսափելի զանգուածային կոտորածներու պատճառով: 1915 թուականէն սկսեալ՝ Օսմանեան կայսրութեան վերջին տարիներուն մէկ ու կէս միլիոն հայեր աքսորուեցան, սպանուեցան կամ մահուան երթի դուրս եկան: Յիշատակի այս օրը մենք կրկին կը միանանք Ամերիկայի ու ողջ աշխարհի հայ համայնքին՝ սգալով բոլոր անոնց համար, որոնք կորսնցուցին իրենց կեանքը:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանը Մամուլի Ազատութեան Ոլորտին Մէջ Բարելաւած է Դիրքերը

Հայաստանը 2018 թուականի արդիւնքներով մամուլի ազատութեան վարկանշային աղիւսակին վրայ աննախադէպ առաջընթաց գրանցած է՝ 19 կէտով բարելաւելով իր դիրքերը եւ յայտնուելով 61-րդ հորիզոնականը: Այս մասին «Ֆէյսպուք»-ի իր էջին գրառում կատարած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Վարկանշային աղիւսակը կազմում է «Լրագրողներ առանց սահմանի» միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւնը:

Սա, ըստ էութեան, միջազգային արձանագրումն է իմ այն պնդման, թէ Հայաստանում մամուլը երբեք աւելի ազատ չի եղել, քան այսօր:

Մենք, ի հարկէ, կը դիտարկենք կազմակերպութեան բարձրացրած հարցերը, մտահոգութիւնները եւ առաջարկները եւ կասկած չկայ, որ մամուլի ազատութեան առումով, ինչպէս միւս ոլորտներում, Հայաստանը շարունակելու է իր առաջընթացը», - գրած է Փաշինեան:

Որեւէ Ծրագրի Հիման Կրայ Բանակցութիւններ Չեն Ընթանար. Հայաստանի Պատասխանը Մամետեարովին

Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան մամուլ խօսնակ Աննա Նաղտալեան արձագանգած է Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար Էլմար Մամետեարովի՝ Մոսկուայի մէջ ՀՀ արտաքին գործոց նախարարի հետ հանդիպումէն ետք ըրած յայտարարութիւններուն:

Հարց. Անդրադառնալով Ապրիլ 15-ի հանդիպման՝ Մամետեարովը նշած է, որ քննարկում եղած է 2016-ին Ռուսաստանի կողմէ ներկայացուած ծրագրի հիման վրայ: Ի՞նչ ծրագրի մասին է խօսքը:

«Նախ, նշեմ, որ հանդիպման արդիւնքներով հրապարակուած է անոր մասնակցող կողմերու համատեղ յայտարարութիւնը, ուր արդէն իսկ նշուած են քննարկուած թեմաները: Համատեղ յայտարարութիւնները այն նպատակով կը կատարուին, որ անոնց մէջ ամփոփուին հանդիպման բոլոր մասնակիցներուն միջեւ համաձայնեցուած ձեւակերպումները: Համաձայնեցուած ձեւակերպումներէն դուրս, անոնց հակասող յայտարարութիւնները չեն նպաստեր փոխվստահութեան ամրապնդման, առաւել եւս եթէ անոնք մտացածին են եւ չեն համապատասխաներ իրականութեան:

Ներկայիս որեւէ ծրագրի հիման վրայ բանակցութիւններ չեն ընթանար: Աւելին, քննարկումներու բովանդակային մասը կը շարունակէ ընթանալ իրար դիրքորոշումներուն ծանօթանալու, պարզաբանելու ու յստակեցնելու տիրոջի մէջ»:

Հարց. Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարը յայտարարած է յառաջիկային Ուաշինկթընի մէջ հանդիպում իրականացնելու ամերիկեան կողմի առաջարկի մասին: Արդեօ՞ք կը հաստատէք այդ տեղեկութիւնը:

Աննա Նաղտալեան. Ինչպէս գիտէք ԼՂ հիմնախնդրի վերաբերեալ իւրաքանչիւր հանդիպման հաս-



Արտաքին գործոց նախարարութեան մամուլ խօսնակ Աննա Նաղտալեան

տատումէն ետք այդ մասին կը յայտարարուի համաձայնեցուած կարգով: Իրապէս, կը դիտարկուի ապագայ հանդիպումը համանախագահ երկիրներէն մէկուն մէջ իրականացնելու հնարաւորութիւնը՝ հաշուի առնելով նախկին նմանօրինակ հանդիպումներու աշխարհագրութիւնը:

Քանի որ այս հարցը դեռ քննարկման փուլի մէջ է, պէտք է ձեռնպահ մնալ միակողմանի ազդարարումներէ եւ հրապարակային բանակցութիւններու գործելաոճէն: Աւելին, համանախագահ երկիրներէն մէկուն մէջ կայանալիք հանդիպման մասին նախապէս յայտարարելը անյարգալիք վերաբերմունք է գործընթացի մասնակիցներու, բայց առաջին հերթին՝ տուեալ համանախագահի նկատմամբ:

Դեռ չկայացած պայմանաւորուածութիւններու ազդարար դառնալու ձգտումը չի նպաստեր փոխվստահութեան հիման վրայ բնականոն աշխատանքային մթնոլորտի ձեւաւորման:

Թուրք Ոստիկանները Արգիւած Են

Շարունակուած էջ 1-էն

Թաղամասին մէջ Մարդու իրաւունքներու ընկերութեան գրասենեակին առջեւ: Քեքսինը նշած է, որ իրենք խստօրէն կը դատապարտեն միջոցառման իրականացման դէմ իրաւապահ համակարգի գործողութիւնները:

Քրտամէտ ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան անդամ, խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլանը նշած է,

որ Սուլթանահմէտի հրապարակին վրայ նախատեսուած միջոցառման չեղարկումը Թուրքիոյ մէջ ժողովրդավարութեան նահանջի հերթական ապացոյցն է:

«Ցանկացած յանցանք, որ դատապարտուած չէ, կը կրկնուի, եւ, ցաւօք, այս յանցանքը եւս այսօր կրկնութիւն կը ստանայ: Այն բռնութիւնները, որոնք 104 տարի առաջ գործադրուած են հայերու նկատմամբ, այսօր կ'իրականացուին ընդդէմ քիւրտներու», - ըսած է Փայլան:

Վարչապետը Ընդունեց ԱՄՆ Գոնկրէսականներու Պատուիրակութիւնը



ԱՄՆ գոնկրէսականներու այցելութիւնը Ծիծեռնակաբերդի եղեռնի Յուշահամալիր

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է ԱՄՆ գոնկրէսականներու պատուիրակութիւնը, որու կազմին մէջ էին Ներկայացուցիչներու պալատի ժողովրդավարական գործընկերութեան յանձնախմբի (ԺԳՅ) համանախագահ Տեյվիտ Փրայսը, ԺԳՅ համանախագահ քոնկրէսական Վերն Պուքանանը, ԺԳՅ անդամ քոնկրէսականներ Տինա Թայթթուսը, Մայքլ Քոնաւէյը, ձերի Քոնոլին, Ատրիան Սմիթը, Պարպարա Լին եւ Թերրի Սիւելը:

Նիկոլ Փաշինեանը նշած է, որ Հայաստանը կը գտնուի արմատական կարեւոր բարեփոխումներու շրջանի մէջ եւ հաստատակամ առաջ կը շարժի ժողովրդավարութեան զարգացման ուղիով: Վարչապետը անդրադարձած է մէկ տարի առաջ տեղի ունեցած թաւշեայ յեղափոխութեան, ապա 9 Դեկտեմբերին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն՝ նշելով, որ անկախացումէն ի վեր Հայաստանի մէջ տեղի ունեցած են առաջին ազատ, ժողովրդավարական եւ թափանցիկ ընտրութիւնները:

ԱՄՆ գոնկրէսականները պատ-

րաստակամութիւն յայտնած են՝ իրենց աջակցութիւնը բերելու Հայաստանի մէջ ժողովրդավարութեան ամրապնդման, տնտեսական բարեփոխումներու իրականացման եւ հայ-ամերիկեան բարեկամութեան յետագայ խորացման:

Հայաստան այցելած ԱՄՆ քոնկրէսականները ՀՀ Ազգային ժողովի պատգամաւորներ, Հայաստան-ԱՄՆ բարեկամական խումբի անդամներ Գայեանէ Աբրահամեանի եւ Յովհաննէս Յովհաննիսեանի ուղեկցութեամբ այցելած են Ծիծեռնակաբերդի 1915 թուականի Հայոց ցեղասպանութեան զոհերու յուշահամալիր:

Անոնք այցելած են Հայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկ, ծանօթացած 20-րդ դարու առաջին արհաւիրքը հաւաստող վաւերագիրներուն, դիտած ցուցանմուշները, գրառում կատարած «պատուաւոր հիւրերու» յուշամատենին մէջ:

Թանգարան-հիմնարկի տնօրինութիւնը քոնկրէսականներուն նուիրած է Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ անգեղն լեզուով գիրքեր:

Թուրքիոյ Իշխանութիւնները Դարձեալ Կը Սեղադրեն Հայկական Լոպպին

Թուրքիոյ կառավարութեան մեկնաբանութիւն տուած են ատրպէյճանական «Trend» լրատուական գործակալութեան եւ դարձեալ յիշեցուցած են արխիւները բանալու առաջարկին մասին՝ 1915-ին տեղի ունեցած ուսումնասիրելու նպատակով: Այս մասին կը հաղորդէ Ermenihaber.am-ը:

«Այն ժամանակ, երբ Հայաստանի մէջ ոչ մէկ թուրք կ'ապրի, Թուրքիոյ մէջ ապրող հայերը խնդիրներ չունին: Բազմազգութիւնը Թուրքիոյ ամենակարեւոր ձեռքբերումներէն է», - նշուած է մեկնաբանութեան մէջ: Եւ այս մէկը կ'ըսուի այն պարագային, երբ Թուրքիոյ մէջ բնակող հայերը ոչ միայն խնդիրներու, այլեւ բազում

վտանգներու մէջ են: Թուրքիոյ կառավարութեան ներկայացուցած են նաեւ այն անհիմն պնդումները, թէ հայկական լոպպին եւ Սփիւռքը կը խոչընդոտեն հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորումը:

«Հայկական լոպպիի գործողութիւնները Թուրքիոյ դէմ, առաջին հերթին կը վնասեն հայերու շահերուն, որոնք Հայաստանի մէջ կ'ապրին աղքատութեան մէջ: Եթէ հայկական լոպպին կը կարծէ, որ արեւմտեան խորհրդարաններու միջոցով կրնայ ձեռնարկ գործադրել Անգարայի վրայ՝ չարաչար կը սխալի», - ըսուած է Թուրքիոյ կառավարութեան մեկնաբանութեան մէջ:


Ան պահանջած է առերեսուել պատմական իրողութեան հետ՝ խոստանալով շարունակել պայքարը յանուն իրաւունքներու ու օրէնքներու պաշտպանութեան:

Սուլթանահմէտի հրապարակին վրայ նախատեսուած միջոցառումը կազմակերպած էին Պոլսոյ Մարդու իրաւունքներու ընկերութիւնը ու Յեղապաշտութեան եւ

խտրականութեան դէմ պայքարի յանձնաժողովը:

Նախորդ տարի եւս Հայոց ցեղասպանութեան յիշատակի միջոցառումը իրաւապահներու կողմէ չեղեալ համարուած էր: Աւելին, որոշ մասնակիցներու ձեռքէն խլուած էին «ցեղասպանութիւն» եզրոյթը պարունակող պատմաւորները:

Իրաքի Իսլամ Կրօնական Ղեկավարներ. Թուրքիոյ Իշխանութիւնները Պէտք է Հայցեն Հայ Ժողովրդի Ներողամտութիւնը



Ապրիլի 15-ին Իրաքում ՀՀ դեսպան Հրաչեայ ֆուլադեանը դեսպանութիւնում ընդունեց Իրաքի կրօնական ազգային խորհրդի նախագահ Շէյխ Իսէֆ ալ-Բասրիին, Իրաքի կառավարութեանը կից Համակեցութեան եւ Համայնքային խաղաղութեան մշտական յանձնաժողովի անդամներին, ինչպէս նաեւ՝ նրանց ուղեկցող հոգեւորականների պատուիրակութեանը:

Հանդիպման ընթացքում մուսուլմանական հոգեւոր առաջնորդները ներկայացրեցին Իրաքում ազգային եւ կրօնական միջհամայնքային փոքրամասնութիւնների համագործակցութեան ամրապնդմանն ուղղուած աշխատանքներն՝ ընդգծելով Իրաքահայ համայնքի եւ Հայ Առաքելական եկեղեցու Իրաքի թեմի անդնահատելի դերն այս գործում՝ յատկապէս պատերազմական եւ դրան յաջորդած ժամանակահատուածում: Հոգեւոր առաջնորդների հետ հանդիպմանը քննարկուեցին նաեւ Հայոց ցեղասպանութեան հետ

առնչուող հարցեր: Իրաքի կրօնական ազգային խորհրդի նախագահ Շէյխ Իսէֆ ալ-Նասրին, խստօրէն դատաւարտելով Օսմանեան կայսրութիւնում Իրականացուած անմարդկային ոճրագործութիւնը, ընդգծեց, որ թուրքական ներկայ իշխանութիւնները, յանուն իրենց սերունդների, պէտք է հայցեն հայ ժողովրդի ներողամտութիւնը կատարուածի համար:

Հանդիպման վերջում հոգեւոր առաջնորդները փոխանցեցին իրենց ողջոյններն ու բարեմաղթանքները Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ շեշտելով Իրաքում կրօնական եւ ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ Իրաքեան իշխանութիւնների պետական հոգածութիւնը՝ կարեւորելով յատկապէս Իրաքի բազմազգ եւ բազմակրօն խճանկարում երկու ժողովուրդների միջկրօնական համերաշխութեանն ուղղուած կապերի զարգացման անհրաժեշտութիւնը:

Հայաստանի Ժողովուրդն Ու Ղեկավարութիւնը

Շարունակուած էջ 1-էն
կը մատուցենք Հայոց Մեծ Եղեռնի զոհերու յիշատակին:
«Հայոց ցեղասպանութեան առանձնատկութիւններէն է այն, որ ցեղասպանութեան ենթարկուած

ընջուած է հայկական ինքնութիւնը կազմող մշակութային ժառանգութիւնը՝ հազարաւոր դարացիներ, եկեղեցիներ եւ վանքեր: Ոչնչացուած են հայկական մշակութի հուշեան կրողները՝ անոր մտաւորականութիւնն ու հոգեւորակա-



ժողովուրդը ոչ միայն բնաջնջուած է ֆիզիքապէս, այլ նաեւ գրկուած է իր հայրենիքին մէջ ապրելու իրաւունքէն: Մեզ հետեւողականօրէն գրկած են այն հողէն, ուր հազարամեակներու ընթացքին ձեւաւորուած էր եւ կը զարգանար հայկական մշակոյթը, հայկական ինքնութիւնը: Երկրի երեսէն

նութիւնը: Այդ հսկայական հարուած էր ոչ միայն հայ ժողովուրդին, անոր մշակութիւնն ու անոր մշակութաբանական տեսակին, այլ նաեւ մարդկային ողջ քաղաքակրթութեան: Անդառնալիօրէն կորսուած է համաշխարհային մշակոյթի մաս կազմող ուրոյն եւ ինքնատիպ շերտ մը: Հայերու, յոյների

Տասնեակ Հազարաւոր Հայեր

Շարունակուած էջ 1-էն
կուսակցական ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ տեղացի քաղաքական գործիչներ:

Հաւաքի սկզբնաւորութեան հնչեցին՝ «Թուրքի մեղաւոր Յեղասպանութեան համար», «Ո՛չ անգամը եւս» եւ այլ՝ Անգլերէն լեզուով վանկարկումներ:
Հանդիսութիւնը սկսու Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգներով՝ կատարողութեամբ «Ալեք Փիլիպոս» վարժարանի ուսանողներուն: Ապա, հոգեւոր դասին կողմէ կատարուեցան աղօթքներով ու կարճ ելոյթներ:

Օրուայ հանդիսավարներ՝ Արմէն Յովհաննէսեանի եւ Թենի Խաչատուրեանի բացման խօսքերէն ետք ելոյթ ունեցան Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի անդամ Փոլ Քորթեզ, որ ներկայացուց քաղաքապետ Փոլ Կարսեթի-

ին, Գոնկրէսի անդամ Պրատ Շըրմըն եւ Գոնկրէսի անդամ Ատամ Շիֆ: Բոլոր ելոյթ ունեցողները դատաւարտեցին թրքական ժխտողական քաղաքականութիւնը, պահանջելով Միացեալ Նահանգներու նախագահէն ու Գոնկրէսէն պաշտօնապէս ճանաչու Հայոց Յեղասպանութիւնը:

Հանրահաւաքի ընթացքին Լոս Անճելըսի ոստիկանները ինքնաշարժերու երթեկութեան առջեւ փակած էին «Ուիլլըր» պողոտայի վրայ գտնուող թրքական հիւպատոսարանի շրջակայ ճանապարհները: Իսկ, Հայկական ցեղասպանութիւնը ոգեկոչող պատանուներով օղանաւեր թռիչք կը կատարէին նոյն վայրին վերեւ:

Ամերիկեան տեղական հեռատեսիլի կայաններ լրատուական հաղորդումներ կը սփռէին հաւաքի վայրէն ու հարցազրոյցներ կը կատարէին քաղաքական գործիչներու եւ ժողովուրդի հետ:

Նախագահ Թրամի Կրկին Օգտագործեց

Շարունակուած էջ 1-էն
Այս օրը մենք նաեւ կը յիշենք ու ճանչնանք բոլոր անոնց աշխատանքը, որոնք փորձեցին վերջ տալ բռնութեան, ինչպէս նաեւ անոնց, որոնք ձգտեցան վստահեցնել, որ նմանօրինակ կոտորածներ այլեւս երբեք պիտի չկրկնուին, ինչպէս իրաւասպաշտպան եւ իրաւաբան Ռաֆայէլ Լեմբինը: Մենք կը յիշենք նպաստները այն մեծահոգի ամերիկացիներուն, որոնք օգնեցին փրկելու կեանքեր եւ վերակառուցելու հայկական համայնքները: Յիշելով բոլոր անոնց, որոնք տառապեցան, մենք նաեւ կ'ոգեշնչուինք այն քաջ

եւ տոկուն հայերէն, որոնք ի յեճուկս հսկայական դժուարութիւններու, կառուցեցին առօրյ համայնքներ ողջ աշխարհի մէջ, այդ շարքին եւ Միացեալ Նահանգներու մէջ:
Մենք կը խոստանանք սորվիլ նախկին ողբերգութիւններէն, որպէսզի չկրկնենք անոնք: Մենք կ'ողջունենք հայերու ու թուրքերու ջանքերը՝ ճանչնալու եւ հաշուելու առնելու իրենց ցաւալի պատմութիւնը: Մենք կը կանգնինք հայ ժողովուրդի կողքին՝ յիշելու Մեծ Եղեռնի ընթացքին կորսուած կեանքերն ու վերահաստատելու աւելի խաղաղ աշխարհ կառուցելու մեր յանձնառութիւնը»:

եւ ասորիներու ցեղասպանութեան անդառնալիօրէն փոխուած է ողջ տարածաշրջանի մը մշակութային պատկերը: Միթէ այս յանցագործութիւն չէր մարդկութեան դէմ:
«Ոճրագործը ոչնչացուց մեր բնաստեղծերը՝ անոնց, որոնք կը կազմէին մեր խիղճը, մեր ինքնութեան առանցքը: Ուստի մեր շարունակական պայքարը մեր էութեան, մեր տեսակի պահպանութեան համար է: Մոռնալով անոնց յիշատակը, մոռնալով անոնց մշակութային ժառանգութիւնը՝ մենք կը դաւաճանենք մեր էութեան: Անոնց յիշատակը վառ պահելով, պայքարելով արդարութեան վերականգնման համար՝ մենք ձեռք կը բերենք անմահութիւնը: Ուստի մենք հետեւողական պիտի ըլլանք Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործին մէջ»:

Նախագահ Սարգսեանի Ուղերձը

Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեանը Ապրիլ 24-ի իր ուղերձին մէջ յատկապէս ըսաւ.

«Այսօր համայն հայ ժողովուրդը՝ առաջադէմ մարդկութեան հետ, աշխարհի բոլոր մայրցամաքները վրայ կ'ողկոչէ Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակը:
«Ապրիլ 24-ը Օսմանեան թուրքիոյ մէջ պետական մակարդակով կազմակերպուած եւ իրականացուած Հայոց Յեղասպանութեան անմեղ զոհերու յիշատակի օրն է, իրենց պատմական բնօրրանին մէջ բռնութիւններու ենթարկուած եւ հայրենի հողէն տեղահանուած մեր բազմաթիւ հայրենակից-

ներու ողբերգութիւնը վերստին յիշելու, մեր կորսնցուցած հոգեւոր, նիւթական ու մշակութային արժէքներու մասին յիշեցնելու, մարդկութեան դէմ ուղղուած ծանրագոյն յանցագործութեան՝ ցեղասպանութեան մասին աշխարհին եւս մէկ անգամ բարձրաձայնելու, սթափութեան եւ ժխտողականութեան դէմ պայքարի կոչելու օրը:
«Ապրիլ 24-ը մեզի համար խնկարկումի, բայց նաեւ յարութեան օր է:
«Հայոց Յեղասպանութեան անպատժելիութիւնը դուռ բացաւ մարդկութեան դէմ յետագայ ծանր յանցագործութիւններու եւ ցեղասպանութիւններու առջեւ: Յիշենք Հոլոքոստը, Քամպոջան, Ռուսստան եւ միւս ողբերգութիւնները:
Այն զգոնութեան դաս պէտք է ըլլալ բոլորին համար: Մարդկութեան դէմ գործուած այդ աստուածաբանական զոհարարութիւնը եւ դատաւարտումը կարեւոր քայլ պէտք է դառնայ անոր կրկնութիւնը աշխարհի որեւէ տեղ բացառելու նպատակով:
«Մենք մեր երախտագիտութիւնը կը յայտնենք բոլոր այն պետութիւններուն, միջազգային կառույցներուն եւ կազմակերպութիւններուն, հոգեւոր պետերուն եւ քաղաքական առաջնորդներուն, մշակութային, ակադեմիական եւ գիտական շրջանակներու ներկայացուցիչներուն, անհատներուն, որոնք իրենց համերաշխութիւնը կը յայտնեն հայ ժողովուրդին եւ կը ճանչնան ու կը դատաւարտեն Հայոց Յեղասպանութիւնը»:

Յաղթանակի Ապրիլ

ՃՐՏԳ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Կրկին Ապրիլ 24 է եւ մեր սրբացած նահատակներուն յիշատակը ազգովին պիտի նշենք ամենուրեք: Այս տարի աւելի ոգեւորութեամբ պիտի նշուի Ապրիլ 24ը, ի մասնաւորի մեր հայրենիքէն ներս, ուր ժողովուրդը աւելի ազատ կը շնչէ այսօր: Բոլորս պիտի մասնակցինք հրապարակային բողոքներուն եւ թշնամիին ցոյց պիտի տանք, որ մենք կանք ու պիտի մնանք: Սակայն մեր ուսերուն վրայ տակաւին ծանր բեռ կը մնայ, մե՛ծ պարտականութիւն մը՝ նոր սերունդը դաստիարակել, որ պէսզի ան լաւատեղեակ ըլլայ իր պատմութեան, միշտ ջահը վառ պահէ եւ պահանջատէր մնայ: Մեր մատդաշ սերունդը պէտք է լաւապէս գիտակցի, որ միայն Սուլթան Ապտուլ Համիտը, Թալէպը, Էնվերը եւ ձեմալ Աթաթուրքը չէին որ գործարարեցին Հայոց Յեղասպանութիւնը, այլ Քեմալ Աթաթուրք եւ շարունակեց անոնց սկսած ոճիրը, իսկ երբ հայերը արդէն իսկ ֆիզիքապէս ուժասպառ էին եւ հոգեպէս ընկճուած, անոր հետեւորդը՝ Իսմայիլ Ինչիսոն, վրայ հասաւ իր «Վարլըխ Վերկիսի» անշարժ գոյքերու սնանկութեան օրէնքով, որ իր կարգին հայ բարեկեցիկ դասակարգին նիւթական մեծ վնասներ հասցուց:

Իսկ ներկայիս, Թուրքիոյ երազկոտ «սուլթան» Էրտողանը կ'աշխատի ճգմել իր իսկ Թուրք արիւնակիցները եւ բանտերը կը նետէ իր հակառակորդները. ան քիւրտական քաղաքները աւերակներու կը վերածէ եւ իր եղբայր իսլամ քիւրտերը կը հալածէ, ալ ո'ւր մնաց Թուրքիոյ մէջ հայերուն խաղաղ ապրելու մտահոգութիւնը կամ Յեղասպանութեան ճանչումը. Էրտողան կը միտի Թուրքիոյ հայը անգոր ստրուկի վերածել:

Էրտողան նաեւ կը շարունակէ Յեղասպանութեան հետքերը վերացնել, եկեղեցիները մզկիթներու կամ այլ պետական շէնքերու վերածել, եթէ անոնք տակաւին ախոռներու չեն վերածուած. ան հայկական մշակոյթը անհետացնել կը ջանայ. արդարեւ, ներկայիս, պետական մակարդակով եւ հովանաւորութեամբ, Թուրք պատմաբաններ տասնեակ հատորներ կը պատրաստեն զանազան լեզուներով՝ Հայոց Յեղասպանութիւնը հերքելու համար:

Միւս կողմէ, Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցը կը զարգանայ եւ մեր բարեկամ երկիրներուն ու աշակիցներուն թիւը օրէ օր կ'աճի. հետեւաբար, մենք յաղթանակի՝ ճանապարհին վրայ ենք:

Այս առումով, վերջերս մե՛ծ յաղթանակ արձանագրուեցաւ, երբ Ֆրանսայի նախագահ Իմանուէլ Մաքրոն որոշեց Ապրիլ 24ը իբրեւ սուգի օր նշել Ֆրանսայի մէջ: Էրտողան, իր կարգին, անշուշտ զայրացած, սպառնաց եւ փորձեց պատմութեան դաս մը տալ Մաքրոնին՝ յիշեցնելով իր պետութեան «քաջագործութիւնները» Ալճերիոյ մէջ եւ այլուր: Արդարեւ, Թուրքերը կը փորձեն շեղել Մաքրոնի որոշումին միտումը եւ տկարացնել անոր ազդեցութիւնը՝ պատճառաբանելով, թէ անոր նպատակն է Եւրոպական Միութեան դռները փակել Թուրքիոյ դիմաց: Թէեւ կրնայ պատճառներէն մէկը իսկապէս այդ ըլլալ, այնուամենայնիւ մենք մեր ուզածը ստացանք:

արդէն: Մէկ ուրիշ կարեւոր ձեռքբերում մըն ալ Եգիպտոսի նախագահ Ապտուլ Ֆաթհ Միսիի արտայայտութիւնն էր Տաւրոսի համագումարին ընթացքին, երբ ան անուղղակի կերպով հաստատեց Հայոց Յեղասպանութիւնը՝ յիշելով Եգիպտոս ապաստանած հայ գաղթականները Համաշխարհային Ա. պատերազմի տարիներուն: Այդ մէկը եւս զայրացուց Էրտողանը:

Միւս զարգացումը Մէնուտիա Արաբիոյ դիրքն է: Վերջինս նոյնիսկ դիւանագիտական յարաբերութիւններ չունի Հայաստանի հետ, Արցախի տագնապին պատճառով՝ Ատրպէյճանի սիրոյն անշուշտ, ալ ո'ւր մնաց Հայոց Յեղասպանութեան ճանաչումը: Սակայն, հոս կրկին քաղաքականութիւնը իր դերը խաղաց՝ մե՛ր օգտին: Մէնուտիա Արաբիան մրցումի մէջ է Թուրքիոյ հետ Իսլամական աշխարհը առաջնորդելու տենչով, իսկ վերջերս սէնատի լրագրող եւ իմբազիր Խաչաքճիի սպանութեան համար Էրտողան փորձեց ամբաստանել գահաժառանգ իշխան շէյխ Մուհամատ Սալմանը: Ի պատասխան, Մէնուտիա Արաբիոյ պատկանող «Շարք Աուսաթ» թերթի էջերուն վրայ առաջին անգամ ըլլալով լոյս տեսաւ Յեղասպանութեան մասին յօդուած մը, որուն մէջ յիշուեցաւ, թէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումով Թուրքիա հատուցումներ պէտք է կատարէ, եւ թէ ա՛յդ է հիմնական պատճառներէն մէկը, որուն համար Թուրքերը կը հերքեն Յեղասպանութեան իրողութիւնը:

Այս բոլորի կողքին ակնյայտ է, որ Յեղասպանութիւնը ճանչցող երկիրներու, նահանգներու եւ քաղաքներու թիւը մնայուն աճի մէջ է, ինչպէս վերջերս Միացեալ Նահանգներու Ալապամա նահանգը:

Մենք պիտի շարունակենք մեր պայքարը մինչեւ մեր իրաւունքները ձեռք բերումը. ուրիշ այլընտրանք չունինք: Մենք յաղթանակի ճամբուն վրայ ենք եւ պիտի տոկանք, սակայն արդի պայմաններուն մէջ, հարկ է որ շատ

Ապրիլ 24-ի Դրոշմը

«Երբ ուրախութեան դուռ մը կը փակուի, ուրիշ մը կը բացուի: Բայց ընդհանրապէս մենք այնքա՛ն երկար կը նայինք փակ դռան, որ չենք նկատեր այն՝ որ մեզի համար բացուած է:» **Յելլըն Բելլըր**

«Ատելութիւնը քանդիչ է: Անորմով լեցուած մարդը իր անձին մեծագոյն թշնամին է: Փոխանակ թշնամիդ ատելու, փորձէ անկէ աւելի լաւը ըլլալ եւ այդպիսով վրէժդ լուծել:» **Գեորգ Տէր Դաւիթեան**

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱՎԻԹԵԱՆ

Մարդ կայ, որ իր կրած դժբախտութեան բեռն տակ կը կքի եւ յուսատու ապագայի մը հեռանկարը չտեսնելով կը յանձնուի: Մարդ ալ կայ, որ կ'որոշէ բարձրանալ դժբախտութեան մը պատճառաւ վար ինկած մակարդակէն, արժանապատիւ ապագայ մը կերտելու հաստատակամութեամբ: Այս երկրորդ տեսակի մարդոցմէ էին վերելի մէջբերումներուն հեղինակները՝ հռչակաւոր Հելլըն Բելլըրը եւ համեստ հայրս: Քելլըր ծնած էր 1880-ին եւ երբ հազիւ 19 ամսու էր, հիւանդութեան մը պատճառաւ կորսնցուց իր տեսողութիւնն ու լսողութիւնը: Հակառակ այս ահաւոր դժբախտութեան, իր ծնողքին քաջալերութեամբ, 24 տարեկանին ան դարձաւ աշխարհի առաջին կոյր ու համր անձը, որ տիրացաւ Պսակաւոր Արուեստից վկայականին: Տարիներու ընթացքին ան դարձաւ հռչակաւոր հռետոր մը, բեղմնաւոր գրող մը, ինչպէս նաեւ հասարակական գործիչ մը:

Գեորգ Տէր Դաւիթեան ծնած էր 1910-ին եւ հազիւ 5 տարեկան հասակին որբացաւ, երբ իր ծնողքը նահատակուեցան Մեծ Եղեռնին: Շուայլութեան մէջ ծնած մեծահարուստ ընտանիքի գաւակը յան-


կարծ դարձաւ անտուն: Տարիներու ընթացքին կրած բազում զրկանքները փոխանակ գինք ընկճելու, իրմէ կերտեցին հաստատակամ ու լաւատես անձնաւորութիւն մը: Իր յաջողութիւններով ան վրէժխնդիր դարձաւ իր կրած զրկանքներուն, միշտ հաւատալով, որ իր անկատար մնացած երազներն ալ պիտի իրականանան իր գաւակներուն եւ թոռներուն յաջողութիւններով:

Ապրիլեան այս օրերուն, երբ կը խորհրդածենք Եղեռնէն վերապրած առաջին սերունդին թողած դրոշմի մասին, կը համոզուինք, որ վերել նշուած արժանիքները ունեցող որբերն էին, որ հակառակ անոր, որ «մանկութիւն չունեցան», բայց «տուն չինեցին», որ դարձաւ հիմք իրենց յաջորդած սերունդներուն յաջողութիւններուն: Եթէ անոնք կքէին իրենց կրած դժբախտութեան ծանրութեան տակ եւ կամ միայն ատելավառ զգացումներով առաջնորդուէին, ապա Եղեռնը հասած պիտի ըլլար իր լրումին: Այս գիտակցութիւնը յստակ պէտք է ըլլայ ամէն մէկ յաջողող սերունդի մտքին մէջ, առաջնորդելով զանոնք, որ խորհրդածեն. «Ի՞նչպիսի դրոշմ կամ ազդեցութիւն թողած է Ապրիլ 24-ը իմ վրայ եւ ի՞նչ ուղղութեամբ կ'ուզեմ ընթացնել իմ կեանքը»:

հաւաստիկ ներկայիս ունինք անկախ հայրենիք, ազատագրուած Արցախ, հզօր բանակ, զարգացած ժողովուրդ եւ միշտ թիկունք կանգնող բարգաւաճ Սփիւռք:

Ալ լալ ու ողբալու ժամանակ չունինք, աշխատանք է պէտք: «Այսքան դար լացինք, ո՞վ է լսողը, Մեզ ի՞նչ շահ բերաւ արցունքի ծովը»:

**THE ARARAT-ESKIJIAN MUSEUM AND
THE NATIONAL ASSOCIATION FOR ARMENIAN STUDIES AND RESEARCH
Present
THE ART OF ARMENIA: AN INTRODUCTION**





**An Illustrated Lecture by
Dr. Christina Maranci**
Arthur H. Dadian and Ara Oztemel Professor of
Armenian Art and Architecture, Tufts University

Sunday, April 28, 2019, at 4:00 p.m.

**Ararat-Eskijian Museum—Sheen Chapel
15105 Mission Hills Road
Mission Hills, CA**

Free and open to the public. Reception and refreshments immediately following the program.

Copies of *The Art of Armenia* will be available for purchase and signing on the night of the lecture.

Armenia Marks 104th Anniversary of the Genocide



YEREVAN (RFE/RL) -- Tens of thousands of people marched to the Tsitsernakabert memorial in Yerevan and laid flowers there on Wednesday as Armenia marked the 104th anniversary of the 1915 genocide of Armenians in Ottoman Turkey.

As always, the annual procession began with a prayer service held by Catholicos Karegin II, the supreme head of the Armenian Apostolic Church, by the eternal fire of the hilltop memorial overlooking the city center. The ceremony was attended by President Armen Sarkissian, Prime Minister Nikol Pashinyan and other senior state officials.

"It is the day to recall once again the tragedy of our compatriots who had suffered ferocities and had been expelled from the land of their ancestors ... to tell the world once again about the Genocide -- the most hideous crime against humanity -- and to call for soberness and a fight against denial," Sarkissian said in a written statement issued on the occasion.

"Impunity that followed the Armenian Genocide had opened the doors for other grave crimes against humanity and genocides: remember the Holocaust, the tragedies in Cambodia and Rwanda," he said.

A separate statement released by Pashinyan noted not only the slaughter of some 1.5 million Armenians but also the destruction of Armenian cultural heritage in the Ottoman Empire.

"We were consistently deprived of the land on which Armenian culture and Armenian identity were formed and developed over thousands of years. The cultural heritage that constitutes the Armenian identity — thousands of schools, churches and monasteries — was erased from the face of the earth.

The carriers of the essence of the Armenian culture - intelligentsia and clergy - were annihilated. It was a huge blow not only to the Armenian people, its culture and its cultural type, but also to the human civilization, as whole.

A unique and peculiar layer that

was part of the global culture is irreversibly lost. The genocides of Armenians, Greeks and Assyrians irrevocably changed the cultural image of the whole region. Was this not a crime against humanity?

The perpetrators killed our poets, those who constituted our conscience, the basis of our identity. Therefore, we must consistently struggle to preserve our essence, our species. If we commit to oblivion their memory, if we forget about their cultural heritage, we will betray our essence.

By keeping their memory alive and fighting for justice, we will gain immortality. Therefore, we will be consistent in promoting the international recognition of the Armenian Genocide." Read Pashinyan's statement

The U.S. Ambassador to Armenia, Lynne Tracey, also attended that ceremony. She told journalists she came to the memorial to honor memories of the victims.

"The United States does not deny historical facts, and the fact is that what took place in 1915 was one of the worst mass atrocities of the twentieth century. But we remain encouraged by the resiliency of the Armenian people and that is also what today is about," Tracey said.

U.S. President Donald Trump used similar wording in a statement, steering clear of the word "genocide" but referring to the Armenian-language term *Meds Yeghern*, or "great calamity."

Later on, Prime Minister Pashinyan and Mrs. Anna Hakobyan visited the Armenian Genocide Museum-Institute and got acquainted with the exhibits on display at the exposition referred to as "150-year-old witnesses of the Armenian Genocide: Komitas Vardapet and Hovhannes Tumanyan."

Thousands In LA Commemorate 104th Anniversary Of Armenian Genocide

LOS ANGELES – Tens of thousands of people descended on Hollywood and Mid-City Wednesday in two separate marches to mark the 104th anniversary of the Armenian Genocide.

The first march, sponsored by Unified Young Armenians, began at 10 a.m. near Hollywood and Hobart boulevards and ended at Sunset and Hobart boulevards.

At 1 p.m., a coalition of Armenian community organizations staged a march outside the Turkish Consulate at 6300 Wilshire Blvd. Los Angeles Mayor Eric Garcetti and U.S. representatives Brad Sherman and Adam Schiff took part.

California Gov. Gavin Newsom declared Wednesday as "A Day of Remembrance of the Armenian Genocide" The Los Angeles Unified Board of Education unanimously approved a resolution Tuesday to recognize April 24 as Armenian Genocide Remembrance Day.

The March for Justice, organized by the Armenian Genocide Committee—a coalition of the major community organizations and religious denominations—featured a short program that was guided by Masters of Ceremonies Armen K. Hovannisian, Esq. and Tenny Khachatourian, each of whom drew on their personal experiences as descendants of Genocide survivors to advance the call for justice and recognition of the Genocide. The program began with invocation offered by clergy headed by the leaders of all Armenian denominations.

President Trump's April 24th Statement Missed Opportunity to End Genocide Denial

WASHINGTON, D.C. - President Donald Trump's April 24th statement on the 104th anniversary of the Armenian Genocide is a missed opportunity to end genocide denial, reported the Armenian Assembly of America.

"The failure to squarely acknowledge the Armenian Genocide reflects a pattern not only in this year's presidential statement, but past administrations as well that fosters an atmosphere for denial and empowers authoritarian regimes to persecute Christians and other minorities," stated Assembly Executive Director Bryan Ardouny. "A genocide denied is an injustice to all who are being persecuted," he added.

The plight of the Armenian people captured the attention of the American public with President Woodrow Wilson stating that "the sympathy for Armenia among our people has sprung from untainted consciences, pure Christian faith, and an earnest desire to see Christian people everywhere succored in their time



of suffering, and lifted from their abject subjection and distress and enabled to stand upon their feet and take their place among the free nations of the world."

President Theodore Roosevelt stated that the atrocities committed by the "Turks on the Armenians" was "so

Continued on page 2

Erdogan Defends 1915 Armenian Deportations: The Most Reasonable Behavior

ANKARA -- Turkish President Recep Tayyip Erdogan spoke at a Symposium on 'Development, Vision and Contribution to the Surveys on History of Archives' held in Bestepe Millet Congress and Culture Center on 24 April.

Erdogan said, the Armenian issue is one of the most controversial issues in world history. "We already know that those, who are stirring up trouble with so-called Armenian genocide allegations, France in particular, do not have any intention of seeking the truth, and we want the entire world to know it, too," Erdogan said.

"We see that those who attempt to lecture us on democracy and human rights over the Armenian issue themselves have a bloody past," Erdogan said.

In his speech, Erdogan accused the Armenians and their supporters of massacring the Muslim people, including women and children, in eastern Anatolia and said their deportation to

the Syrian Desert was "the most reasonable action that could be taken in such a period."

"Relocation is one thing, massacre is another thing," he said.

The people who instigated massacres and persecuted others in past centuries now "put on the masks of advocates of human rights and freedoms," Erdogan stated.

Erdogan said that no one has been able to prove with archival evidence that an Armenian genocide occurred.

The countries and international bodies that recognize the Genocide include Russia, Italy, Germany, France, Canada, Poland, and the European Parliament, and some countries outlaw "Armenian genocide" denial.

Turkey and its close ally Azerbaijan are the only countries that directly deny statements about histori-

Continued on page 2

Armenia Advances in 2019 World Press Freedom Index



PARIS (Armradio) — Armenia is ranked 61st in the 2019 World Press Freedom Index released by Reporters Without Borders today. Last year it was ranked 80th.

Georgia is placed just ahead of Armenia at 60th, Russia is 149th, Turkey and Azerbaijan are ranked 157th and 166th respectively. Armenia's southern neighbor Iran is 170th in the list.

Norway, Finland, Sweden, Netherlands and Denmark are ranked as the countries with the highest degree of freedom for journalists.

According to the report, "the new media served as an echo chamber for the "velvet revolution" in the spring of 2018 that brought a former journalist [Nikol Pashinyan] to power."

The study notes, however, that "the media landscape is diverse but polarized and the editorial policies of the main TV channels coincide with the interests of their owners."

"Journalistic independence and transparent media ownership continue to

be major challenges. The new government must try to recover the opportunities that were lost in the transition to digital TV, which has paradoxically restricted the number of regional channels," Reporters Without Borders said.

At the same time, the organization urges the government to refrain from any excesses in its attempts to combat "fake news".

"Its use of the security services for this purpose, followed by a social network user's arrest, prompted concern. Investigative journalism, which is flourishing online, is well placed to play a major role in a national offensive against corruption."

The 2019 World Press Freedom Index shows how hatred of journalists has degenerated into violence, contributing to an increase in fear. The number of countries regarded as safe, where journalists can work in complete security, continues to decline, while authoritarian regimes continue to tighten their grip on the media.

Armenia to Acquire More Russia Advanced Weapons

Armenia will continue to acquire Russian weapons "very vigorously," Defense Minister Davit Tonoyan said on Wednesday after holding fresh talks with the head of Russia's state-owned arms exporter, Rosoboronexport.

Tonoyan and Rosoboronexport's Alexander Mikheyev met on Tuesday on the sidelines of an international security conference held in Moscow.

"The parties reached a number of new agreements on expanding the scope of cooperation and ensuring its continuity," the Armenian Defense Ministry said in a short statement on the meeting. It did not elaborate.

Tonoyan, who was appointed as defense minister in May 2018, and Mikheyev met on at least two occasions last year. Their latest talks came two months after Russian and Armenian officials signed fresh defense contracts in Moscow. Their details have still not been made public.

Earlier in February, Yerevan confirmed the signing of a Russian-Arme-



nian contract for the purchase of four Sukhoi Su-30SM fighter jets to the Armenian Air Force. The total cost of the deal remains unknown.

Speaking to Russian journalists on Wednesday, Tonoyan reiterated that the multirole jets will be delivered to Armenia by the beginning of 2020. The Armenian side has already made first payments for them, he said, according to the TASS news agency.

The minister also reaffirmed Yerevan's plans to buy more such Russian warplanes. "We will be arming and rearming ourselves very vigorously," he added. "The purchases of Russian weaponry will continue."

Indicted Former Official Detained in Russia, Armenia Will Request His Extradition

MOSCOW (RFE/RL) — Mihran Poghosian a former senior Armenian official wanted by law-enforcement authorities in Yerevan on corruption charges was reportedly detained in Russia over the weekend.

Armenian prosecutors said on Monday that they will ask their Russian counterparts to extradite Poghosian, who headed a state agency enforcing court rulings from 2008-2016 and was linked to Armenia's former leadership.

Earlier this month, the Special Investigative Service (SIS) moved to arrest Poghosian after accusing him of abusing his powers to enrich himself. Security officers searched his Yerevan villa and offices on April 18.

Poghosian denies the charges as politically motivated. He said through his office last week that he currently resides in Moscow. But he did not clarify whether he is planning to return to Armenia.

An SIS spokeswoman, Marina Ohanjian, told RFE/RL's Armenian service on Sunday that Poghosian was taken into custody in the northwestern Russian region of Karelia. She said investigators will request his extradition to Armenia. The Office of the Prosecutor-General said it is already putting together a package of relevant documents that will be sent to Russia.

Russian law-enforcement authorities did not publicly confirm and comment on Poghosian's reported arrest as of Monday afternoon.

The SIS claims that the 42-year-old Poghosian embezzled, through indi-



viduals and companies linked to him, at least 64.2 million drams (\$132,000) in public funds. It also accuses him of giving privileged treatment to a real estate valuation firm that was contracted by the Service for the Mandatory Execution of Judicial Acts (SMEJA) in 2014.

The firm was allegedly a subsidiary of shadowy companies set up by Poghosian in Panama in 2011. Citing leaked documents widely known as the Panama Papers, an Armenian investigative website reported in April 2016 that Poghosian controls three such companies registered in the Central American state.

Poghosian dismissed the report. Nevertheless, he resigned as SMEJA chief shortly afterwards, despite continuing to deny any wrongdoing. A year later, he was elected to the former Armenian parliament on the ticket of ex-President Serzh Sarkisian's Republican Party.

Armenia Marks 104th Anniversary of the Genocide

Continued from page 1

hideous that it is difficult to name them...people whose little children are murdered and their women raped." In a letter to Cleveland Dodge, who led the congressionally chartered Near East Relief organization headquartered in New York City, President Roosevelt stated further that it "was the greatest crime of the war, and failure to act against Turkey is to condone it..." Through the efforts of the Near East Relief, over \$2.5 billion (in 2019 dollars) was raised at the time to help the survivors of the first genocide of the twentieth century.

While this year's statement reflected a dictionary definition of genocide and also used an Armenian expression, Medz Yeghern, it fell short of President Ronald Reagan's declarative statement in 1981: "Like the genocide of the Armenians before it, and the genocide of the Cambodians which followed it - and like too many other such persecutions of too many other peoples - the lessons of the Holocaust must never be forgotten."

Following is the official text of the White House release:

Statement by the President on Armenian Remembrance Day 2019

Today, we commemorate the Meds

were moved to two holding centers near Ankara.

Following the passage of Tehcir Law on 29 May 1915, the Armenian leaders, except for the few who were

Yeghern and honor the memory of those who suffered in one of the worst mass atrocities of the 20th century. Beginning in 1915, one and a half million Armenians were deported, massacred, or marched to their deaths in the final years of the Ottoman Empire. On this day of remembrance, we again join the Armenian community in America and around the world in mourning the many lives lost.

On this day, we also honor and recognize the work of those who tried to end the violence, as well as those who sought to ensure atrocities like this would not be repeated, like human rights activist and lawyer Raphael Lemkin. We recall the contributions of generous Americans who helped save lives and rebuild Armenian communities. As we honor the memory of those who suffered, we also draw inspiration from the courage and resiliency of the Armenian people who, in the face of tremendous adversity, built vibrant communities around the world, including in the United States.

We pledge to learn from past tragedies so as to not to repeat them. We welcome the efforts of Armenians and Turks to acknowledge and reckon with their painful history. And we stand with the Armenian people in recalling the lives lost during the Meds Yeghern and reaffirm our commitment to a more peaceful world.

April 24, 2019

Erdogan Defends 1915 Armenian Deportations

Continued from page 1

cal facts related to the era.

The Ottoman Turkish government's policy of deportations and massacres resulted in systematic extermination of 1.5 million Armenians leaving in the

Empire.

On the night of 23-24 April 1915, the Ottoman government rounded up and imprisoned an estimated 250 Armenian intellectuals and community leaders of the Ottoman capital, Constantinople, and later those in other centers, who

able to return to Constantinople, were gradually deported and assassinated. The date 24 April is commemorated as Genocide Remembrance Day by Armenians around the world.

Rep. Schiff Statement in Recognition of the Armenian Genocide

LOS ANGELES -- Rep. Adam Schiff (D-Glendale), Vice Chair of the Armenian-American Caucus, released a statement in recognition of the Armenian Genocide:


“104 years ago, the Ottoman Empire murdered 1.5 million Armenians in the first genocide of the 20th century. That is a stark and terrible fact, one on which there is no debate. The facts of the genocide were recorded in real time by our diplomats who watched the slaughter in horror.

“It is shameful that presidents from both parties, including President Trump today, have issued statements that describe the facts of the genocide, but stop short of calling it what it was. The denial of the genocide is an enduring wound to the Armenian people who descended from survivors to build lives here in the United States, in Armenia, and around the world.

“For far too long, Turkey has been allowed to exercise a veto on the U.S. government's recognition of the genocide. That has always been outrageous, but as Turkey sinks into dictatorship, purchases Russian missile defense systems, and even assaults Americans on our soil, it is simply a farce. It must end.

“Nearly 90 members of the House have already joined as cosponsors of the Armenian Genocide resolution, and we will continue to build on this support. The truth is on our side. The memory of those who were lost is on our side. The resilience and strength of the Armenian people to survive and rebuild is on our side. Today we remember the victims of Armenian Genocide and we affirm the survival and flourishing of the Armenian people. Tomorrow, we get back to work to secure full recognition, and we will never rest until we succeed.”

Iraqi Muslim Spiritual Leaders Call on Turkey to Apologize for Armenian Genocide



BAGHDAD -- On April 15, Ambassador of Armenia to Iraq, Hrachya Poladian received the Chairman of the National Council of Iraq, Shaykh Yousif Al-Nasri, members of the Supreme Standing Committee for Co-existence and Community Peace of Iraqi Government, as well as the delegation of clergymen accompanying them.

In the course of the meeting, the Muslim spiritual leaders presented works aimed at strengthening the cooperation between national and religious minority communities in Iraq, underlining the invaluable role of the Iraqi Armenian community and the Armenian Apostolic Church in Iraq, especially during the war and its post-war period.

Issues related to the Armenian Genocide were discussed at the meeting with spiritual leaders. Shaykh Yousif Al-Nasri, strongly condemned the inhumane crime committed in the Ottoman Empire, underlining that the current Turkish authorities should ask the Armenian people for forgiveness for their sake.

At the end of the meeting, the spiritual leaders conveyed their greetings and best wishes to Catholicos of All Armenians Karekin II, emphasizing the importance of the treatment by the Iraqi authorities on religious and ethnic minorities in Iraq, highlighting the necessity of developing links to the interfaith solidarity of the two peoples in Iraq's multi-national and multi-dimensional mosaic.

Armenian Genocide Martyrs Monument Sign on Pomona Freeway Downed

MONTEBELLO — Passing cars noticed that the wooden sign post of Armenian Genocide Martyrs Monument on Pomona freeway installed by Caltrans was laying on the ground.

This manifestation of probable vandalism comes on the eve of the

104th anniversary of The Genocide, when Los Angeles area Armenians visit the Montebello Monument site and lay wreaths in memory of their ancestors who were the victims of Genocide perpetrated by the Turkish government.

Armenian Genocide Conference Held in Italian Parliament



ROME — The Italian Chamber of Deputies hosted a conference on “Mets Yeghern: A century after the Armenian Genocide” organized by members of the Italy-Armenia Parliamentary Friendship Group.

Armenian Ambassador to Italy Victoria Baghdasaryan delivered welcoming remarks at the conference and thanked the Deputies for the adoption of the decision on the recognition of the Armenian Genocide in the Chamber of Deputies on April 10. The Ambassador stated that the process of international condemnation and recognition of the Armenian Genocide continues which must be a serious signal that the denialist behavior

on this matter has no place in the value system of the 21st century.

She added that by this step the Italian side reaffirmed its commitments assumed by the UN Convention on Prevention and Punishment of the Crime of Genocide and determination to the universal values.

A number of Italian political, scientific and cultural representatives delivered speeches at the conference, highlighting the importance of the adoption of the Armenian Genocide recognition decision which will contribute to raising awareness on the Genocide among the Italian public and political circles and preventing similar crimes in the future.

Knights & Daughters of Vartan Announce Essay Contest Winners In Conjunction with Times Square Commemoration

NEW YORK, NY – Three college students of Armenian descent were selected as the 2019 winners of the Knights & Daughters of Vartan Annual Essay Contest that is organized annually in honor of the Armenian Genocide.

This year's question how has creative expression—literature, music, cinema, visual arts—enhanced your personal understanding of the Armenian Genocide? delivered thought-provoking responses from applicants who live around the world. A panel of judges selected first place winner Andrew Panosian of La Crescenta, California, second place winner Garine Kamajian of Indian Shores, Florida and third place winner Lilit Arsenyan of Yerevan, Armenia.

Panosian, a graduate of Crescenta Valley High School and a current freshman at Glendale Community College, focused his essay on Kay Mouradian's book *My Mother's Voice* and tied it into his own personal journey.

“Our stories attract readers and teach them how to push through the pain and learn from it, along with staying positive throughout the struggle, because doing so makes the villains lose with zeal. Indeed, Mouradian's book has devoted fans for this very reason. Moreover, my local community has been drawn to this novel because of these teachings, leading to the creation of a play based on the book with the blessing of the author...Because of that, Kay Mouradian's *My Mother's Voice* is an influential read, and one that makes the Armenian Genocide a valuable lesson for humans to learn from. Maybe someday

there can be less hate and more happiness in both our novels and our world.”

Second place winner Kamajian, a junior studying mass communications at the University of South Florida-Tampa, created a parallel between the music of Aram Khachaturian and the tragedy of the Armenian Genocide.

“From the wild chaos of the Sabre Dance, to the lyrical magic of the Gayaneh Ballet, I see the violence and beauty that once was theirs...Khachaturian dives right in, with fast rhythm and anxiety-driving tones, just like how the Turkish soldiers stormed right in on the Armenians without any warning. In the middle of the song, Khachaturian slows down the rhythm and adds in more melodious tunes of a flute, mixing it with the faded background of the pulsating beats of the kettle drums. I can relate the flute melody to the beauty of how Armenians still carried on God's faith throughout the torture of the genocide...”

Third place winner Lilit Arsenyan, a freshman at Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, fused the melodies of Komitas with her childhood experiences at the genocide memorial Tsitsernakaberd on April 24.


“Standing at Tsitsernakaberd, she lays flowers, respecting her grandparents' sacred memory. She prays for those who are far from their motherland, prays for those who remember their home and especially for those who can no longer come back to see Armenia...The sky is weeping, her eyes

“The Art of Armenia: An Introduction” an Illustrated Lecture by Dr. Christina Maranci at Ararat-Eskijian-Museum

THE ARARAT-ESKIJIAN MUSEUM AND
THE NATIONAL ASSOCIATION FOR ARMENIAN STUDIES AND RESEARCH

Present

THE ART OF ARMENIA: AN INTRODUCTION



An Illustrated Lecture by
Dr. Christina Maranci

Arthur H. Dadian and Ara Oztemel Professor of
Armenian Art and Architecture, Tufts University



Sunday, April 28, 2019, at 4:00 p.m.

Ararat-Eskijian Museum—Sheen Chapel
15105 Mission Hills Road
Mission Hills, CA

MISSION HILLS — The Ararat-Eskijian-Museum, The National Association for Armenian Studies and Research (NAASR), present “The Art of Armenia: An Introduction” an Illustrated Lecture by Dr. Christina Maranci Arthur H. Dadian and Ara Oztemel Professor of Armenian Art and Architecture, Tufts University.

Sunday, April 28, 2019, at 4:00 PM. Ararat-Eskijian Museum—Sheen Chapel 15105 Mission Hills Road Mission Hills, CA

Armenia has a material history and visual culture that reaches back to the Paleolithic era. Prof. Christina Maranci’s newly published “The Art of Armenia: An Introduction”, provides a survey of the arts of Armenia from antiquity to the early modern times. It covers a wide range of media, including architecture, stone sculpture, works in metal, wood, and cloth, manuscript illumination, and ceramic arts, and places Armenian art within broad historical, archaeological, and cultural contexts. The Art of Armenia offers students, scholars, and heritage readers of the Armenian community something long desired but never before available: a complete and authoritative introduction to 3000 years of Armenian art, archaeology, architecture, and design.

Christina Maranci is Arthur H.

Dadian and Ara T. Oztemel Professor of Armenian Art and serves as Chair of the Department of Art and Art History at Tufts University, as well as an academic adviser to the Armenian Museum of America and to NAASR. She has published and lectured widely, having authored three previous monographs and over seventy essays, articles, and reviews, including the books *Medieval Armenian Architecture: Constructions of Race and Nation* (2001) and *Vigilant Powers: Three Churches of Early Medieval Armenia* (2015). For the latter work in 2016 she received from NAASR the Dr. Sona Aronian Book Prize for Excellence in Armenian Studies. Her work combines scholarship on the history of Armenian art and architecture with advocacy for at-risk Armenian heritage, particularly medieval monuments in the Republic of Turkey.

Copies of *Art of Armenia: An Introduction* by Dr. Christina Maranci will be available for purchase.

Admission free (Donations appreciated), reception following the program.

For more information call the Ararat-Eskijian Museum at 747-500-7584 or email eskijian@ararat-eskijian-museum.com

This event will be Live Streamed, follow up on Facebook or Ararat-Eskijian Museum.com

Nominees for the 2019 Aurora Prize named

YEREVAN -- The Aurora Prize for Awakening Humanity’s Selection Committee has named three outstanding 2019 Aurora Humanitarians, recognized for performing acts of exceptional courage and their commitment to saving human life, the Prize website said in a statement.

The Selection Committee had chosen the three Aurora Humanitarians from 719 nominations for 523 unique candidates submitted from 72 countries, the source added.

The 2019 Aurora Humanitarians are:

- Mr. Mirza Dinnayi, Co-Founder and Director of Luftbrücke Irak (Air Bridge Iraq), humanitarian organization that flies Yazidi victims from Iraq to Germany for medical treatment.

- Mr. Zannah Bukar Mustapha, lawyer, Director and Founder of Future Prowess Islamic Foundation – a school that provides education to some of the most deprived children in Maiduguri, Nigeria.



- Ms. Huda Al-Sarari, lawyer and activist. Huda Al-Sarari is a brave and inspiring Yemeni human rights activist, who singlehandedly investigates, exposes and challenges a clandestine network of secret prisons run by foreign governments in Yemen, where thousands of men and boys have faced arbitrary detention.

As the source reminds the 2019 Aurora Prize ceremony will take place during the first Aurora Forum, an ambitious and sweeping week of activities, which will be held on October 14-21, 2019, in Yerevan, Armenia, highlighting the best of the world’s social, scientific, educational and humanitarian practices.

NAASR To Hold 65th Assembly on May 4



BELMONT -- The National Association for Armenian Studies and Research invites the public to attend its 65th Annual Assembly of Members on Saturday, May 4, 2019, at First Armenian Church, Nahigian Hall, 380 Concord Avenue, Belmont, MA, convening at 12 noon, with luncheon beginning at 12:15 pm.

This event will feature the progress on NAASR’s state-of-the-art headquarters, research center, and global hub for Armenian Studies through the proximity of First Armenian Church to the construction site across the street, as well as through a detailed presentation from NAASR’s talented architectural, engineering, and design team of Symmes, Maini & McKee Associates (SMMA), whose President and CEO is Ara Krafian.

NAASR Board Chairman, Yervant Chekijian of Watertown, MA, will give welcoming remarks and report on the progress of the Building on Our Legacy Campaign as well as other important NAASR initiatives and plans for the future. Following the luncheon, the SMMA team will highlight special design features and progress on NAASR’s new headquarters, which will be named the NAASR Vartan Gregorian Building in honor of the renowned academic, scholar, historian, and philanthropist.

The luncheon, featured presentation, and NAASR business sessions are open to the public, though only NAASR members with dues paid for the current year are eligible to vote. To make luncheon reservations for the Assembly, send an email to hq@naasr.org, or mail registration and luncheon fee to NAASR, 395 Concord Ave., Belmont, MA 02478, or register online through www.naasr.org. Reservations are due by April 26, and the luncheon fee is \$18.00 per person.

NAASR Organizational Reports and Elections

Following the luncheon and presentation by the SMMA team, the business session of the Assembly will convene with presentations on NAASR’s ongoing activities to advance Armenian Studies, research, and publication. NAASR Board Chairman Yervant Chekijian will chair the business session, and Stepan Piligian of Westford, MA, will serve as Secretary.

The Assembly will also include reports on organizational, informational, academic, and financial matters as well as an election of Directors. In addition, the Assembly’s special committees on Nominations, Constitution and Rules, New Business and Resolutions, and Auditing will present their reports.

Knights & Daughters of Vartan Announce

Continued from page 3

are weeping, her soul is weeping as Komitas’ lyrics storm her mind and take her heart away...”

The names of the winners and excerpts of their essays will be read at the 104th annual Armenian Genocide Commemoration, in an event sponsored by the Knights & Daughters of Vartan and co-sponsored by the Armenian General Benevolent Union (AGBU), Armenian Assembly of America (AAA), Armenian National Committee of America (ANCA), ADL-Ramgavars (ADL) and the Armenian Council of America.

Headlining the event with a special cultural performance is Elie Berberian, who will sing “Ils Sont Tombes” (They Fell), to pay homage to the memory of the martyrs, as well as the late singer who passed away late last year. The historical event will also feature the poetry of the renowned Hovhannes Shiraz, “Intz Guh Moranam” (I Forget Myself) set to music by Majag Toshikian. The third song, “Hayer Miatzek” (Armenians Unite), by Gusan Haykazun, “is a diasporan message to send to all Armenians to remain a united front” according to Berberian. He cites the

message of peace and love in the song.


Senate Minority Leader Chuck Schumer (D-NY), Senator Robert Menendez (D-NJ), and Congressman Frank Pallone (D-NJ) are all confirmed to attend and to speak to the crowd of supporters.

Students from the Holy Martyrs Armenian Day School (HMADS) in Bayside, New York and the Hovnanian Armenian Day School in New Milford, New Jersey, will sing Armenian cultural and patriotic songs. Special performances by the Astghikner Vocal Ensemble of Brooklyn Armenian School and the Yerevan Dance Ensemble of Brooklyn Armenian School will also take place. Official Armenian Genocide shirts will be donated by Christopher Jamgotchian, who owns XI Apparel.

The commemoration will be led by the masters of ceremonies Armen McOmer, Esq. and Nvair Beyerian, who will guide the program as the Armenian Diaspora continues its unyielding efforts to remember, to honor and to educate the world about this catastrophic event in Armenian history that took place in 1915 and claimed the lives of almost 2 million Armenians — a piece of history that goes unrecognized to this day by the Turkish government.

Պատուելի Ասատուր Թօփալեան (Նահատակութեան 110-րդ Տարեդարձին Առթիւ)

Մեծ Եղեռնի 104րդ տարեդարձին նախօրեակին Փաստինայի Կիլիկիա եկեղեցին, իր Կիրակնօրեայ Տէրունական Պաշտամունքի ընթացքին եկեղեցւոյ ժրջան հովիւ վեր. Սերոբ Մկրտիչեան հանգամանօրէն անդրադարձաւ Ապրիլի Հայոց Ցեղասպանութեան, ինչպէս նաեւ Հայ աւետարանական եկեղեցւոյ կրած մեծ կորուստներուն մասին: Արդարեւ աւելի քան 90 պատուելիներ զոհ գացած էին ցեղասպան թուրքի վայրագութեանց:



Վերոյիշեալ նիւթով վեր. Սերոբ գնհատանքով անդրադարձաւ նաեւ Դոկտ. Յովհաննէս ԱՏՄարանեանի լոյս ընծայած «Պատուելի Ասատուր Թօփալեան՝ հաճընցի նահատակ հովիւը» գիրքի մասին: Արդարեւ շատ գիրքեր եւ յօդուածներ գրուած են 1909 Ատանայի Համրտեան ջարդերու մասին, որոնք բազմազարգար հայ անմեղներու կեանքը խլեցին:

Դոկտ. Յովհաննէս ԱՏՄարանեան, իր այս աշխատութեան մէջ, ամփոփ տեղեկութիւններ կու տայ նաեւ Կիլիկիոյ, Ատանայի, Հաճընի Մանագկերտի եւ Վահկայի մասին:

Նահատակ պատուելի Ասատուր Թօփալեան մեծ ներդրում ունեցած է իր պաշտօնավարած շրջաններուն, մասնաւորաբար Հաճընի եւ Վահկայի մէջ: Այս վերջինը՝ 1909ին հեռու մնացած է Կիլիկիոյ արհաւիրքէն: Հաւանաբար թուրք զիւղապետը պատուելի Ասատուրին հանդէպ իր ունեցած համակրանքին եւ յարգանքին պատճառով, պաշտպանած ըլլայ Վահկան, չենթարկուլու համար Ատանայի տխուր վիճակին:

Պատուելի Թօփալեան ճանչցուած էր նաեւ որպէս շինարար անձնաւորութիւն: Իր օրով, Վահկայի Աւետարանական եկեղեցին օժտուեցաւ նոր շէնքով, երիցատունով եւ մանկապարտէզով:

Դոկտ. Յ. ԱՏՄարանեանի սոցն աշխատասիրութիւնը կը պատմէ միայն հայ պատուելիներու նահակութեան մասին: Անոնցմէ շատեր զոհ գացին աւետարանական եկեղեցիներու երեք տարին անգամ մը կայանալիք հաւաքին, որ տեղի պիտի ունենար 1909ին Ապրիլի կիսուն Ատանայի մէջ: Արդարեւ, քանի մը օր տեւելիք սոցն կարեւոր համագումարին պատուիրակութիւններ պիտի գային Այնթապէն, Մարաշէն, Ուրֆայէն, Հաճընէն, Խարբերդէն, Վահկայէն, Իսկենտէ-

րունէն, Տէօրթ Եօլէն, Տարսնէն, Մերսինէն, Հալէպէն եւ Սիսէն: Անոնցմէ կարեւոր խումբ մը, Ատանա տանող ճանապարհին աւետարանական եկեղեցիի մը մէջ, երբ գիշեր ատեն կը քնանային, յանկարծակիօրէն թուրք զինուորներու խուժանին կողմէ յարձակումի ենթարկուելով, խուճապահար կ'ըլլան եւ շատեր կը նահատակուին հրկիզումի ենթարկուած եկեղեցիին մէջ: Կ'ըսուի թէ վերապրող պատգամաւորները՝ թուրք զինուորներու կողմէ չորս խումբերու բաժնուեցան: Անոնցմէ շատեր զնդակահարուեցան: Ուրիշ խումբ մըն ալ եկեղեցի մը փոխադրուելով հոն հաւաքուեցաւ ու հրդեհուեցաւ: Այս խումբին մաս կը կազմէր նաեւ պատուելի Ասատուր Թօփալեան:

Պատուելի Ասատուրին եղբորական մահը տեղի ունեցած է Սաղ Կեչիտ անունով թրքաբնակ գիւղի մը մէջ, ուր ոչ մէկ հայ կար եւ կը գտնուէր Սիս-Ատանա տանող ճանապարհին: Չորրորդ խումբին մաս կազմողները թուրք խուժաններու կողմէ յարձակումի եւ թալանի կ'ենթարկուին եւ գիւղապետարան կը փոխադրուին: Հոն տաս ժամ կալանքի տակ կը մնան: Ապա, Ուրբաթ օրուան աղօթքէն ետք, բոլորն ալ, այլ թէ կին կը սպանուին եւ անոնց դիակները կը հրկիզուին: Այս խումբէն ոչ ոք կ'ուրանայ իր հաւատքը եւ միասնաբար կը նահատակուին:

Շահեկան աշխատասիրութիւն մը այդ ժամանակաշրջանի պատմութեան համար:

Գ. ՄՈԼՈՅԵԱՆ

Թաներ Աքչամի «Սպանութեան Զրամաններ. Թալեթ Փաշայի Զեռագրերը եւ Զայոց Ցեղասպանութիւնը» Գիրքը Թարգմանուած է Զայերէն



Հայաստանի մէջ հայերէն թարգմանութեամբ լոյս տեսած է թուրք պատմաբան, ցեղասպանագետ Թաներ Աքչամի «Սպանութեան Զրամաններ. Թալեթ փաշայի հեռագրերը եւ Հայոց Ցեղասպանութիւնը» գիրքը, ուր ներկայացուած են բացառիկ հեռագիրներ, որոնք կը հերքեն թրքական ժխտողականութեան գլխաւոր թէզը: Անոնք կ'ապացուցեն, որ եղած են սպանութեան հրամաններ, որոնք տուած է Թալեթը: Հեղինակին հաւաստիացումով՝ փաստաթուղթերու ուսումնասիրութիւնն ու հրատարակումն ամենածանր հարուածն է թրքական ժխտողականութեան:

«Արմենիան»-ի հաղորդմամբ՝ գիրքին շնորհանդէսը տեղի ունեցած է Ապրիլ 22-ին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան կեդրոնին մէջ: Գիրքը լոյս ընծայած է Newmag հրատարակչական ընկերութիւնը:

«Գիտական շրջանակներու մէջ հիմնականօրէն կը շրջանառուի այն դրոյթը, որ Թալեթ փաշայի հեռագիրները չհաստատուած փաստաթուղթեր են, եւ շատերը չէին նախաձեռներ նորէն սուզուիլ պատմութեան գիրքը ու հեռագիրներու միջոցով գտնել ճշմարտութիւնը: Թաներ Աքչամ ձեռնամուխ եղաւ այդ գործին», - նշած է գիրքին թարգմանիչ Անդրանիկ Իսրայէլեան:

Ան աւելցուցած է՝ երբ կը կարդար գիրքը ու կը թարգմանէր գայն, կը հիանար հեղինակին մասնագիտական որակներով:

«Աքչամ ուսումնասիրած է նոյնիսկ այն, թէ այդ տարիներուն ինչ թուղթի տեսակներ կ'օգտագործէին, կանոնակարգման ինչ ձեւեր կային, ան ճշդած է, թէ հեռագիրներուն մէջ նշուած մարդիկ գոյութիւն ունեցած են արդեօք, թէ ոչ», - ներկայացուցած է թարգմանիչը:

Գիրքին խմբագիր Արմէն Սարգսեան ըսած է, որ գիրքին մէջ կը շեշտուի այն, որ Հայոց Ցեղասպանութիւնը սկսած է ժխտուիլ իրականացման առաջին իսկ վայրկեաններէն:

Հրատարակութեան գլխաւոր խմբագիր Գնէլ Նալպանտեան ըսած է, որ աշխատած են պահպանել հեղինակին բարեխիղճ շարադրանքը, փաստերու համադրումը, ճշգրտումը, յստակեցումը եւ ատոնց պատճառահետեւանքային կապերու բացայայտումը: «Փորձած ենք չմիջամտել որպէս հայեր: Թարգմանելու ատեն կրնաս բառը փոխարինել հոմանիշով, գտնել այնպիսի բառ մը, որ կը բխի բուն ցանկութիւններէդ: Չենք տրուած այդ գայթակղութեան ու գիրքը թարգմանած ենք այնպէս, ինչպէս ատիկա պիտի ընէր նորվեգացին, վիեթնամցին եւ այլք: Աքչամ առաջնորդուած է հետեւեալ սկզբունքով՝ փաստերը համադրել այնպէս, թէ գերը կառուցել այնպէս, որ իւրաքանչիւր թէզ պարտադիր ըլլայ ապացուցելու, եւ եթէ ոեւէ մէկը որոշէ հերքել գրուածը, ստիպուած ըլլայ թէզ առ թէզ բոլոր կէտերն ու փաստարկները


Շար.ը էջ 18




MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

We will continue to stand by your side and secure your **family** and **business** with our full range of insurance policies.



HEALTH



LIFE



COMMERCIAL


CALL US FOR A PERSONALIZED QUOTE

(818) 500 9585

805 E. Broadway, Glendale, CA 91205
sbmaronian@gmail.com
CA INSURANCE LICENSE # 0C99815

MaronianInsurance.com

Թուրքիոյ Միակ Յայկական գիւղին Մէջ Կը Բացուի Երկրի Միակ Յայկական Թանգարանը



Թուրքիոյ Հաթայ նահանգին մէջ գտնուող երկրին մէջ մնացած միակ հայկական գիւղ՝ Վաքըֆլի մէջ կը բացուի Թուրքիոյ մէջ առաջին հայկական թանգարանը: Թրքական Milliyet պարբերականի հետ գրոյցին Վաքըֆլի Հայ Առաքելական եկեղեցոյ ֆոնտի նախագահ Ճեմ Չափարը նշած է, որ այս թանգարանը կ'ապացուցէ, որ հայերն ու թուրքերը ապրած են միասին եւ կրնան ապրիլ միասին: Չափարը նշած է, որ թանգարանը Մշակույթի նախարարութեան կողմէ յատուկ կարգավիճակ ստացած է եւ աւելցուցած, որ Արեւելեան միջերկրածովեան զարգացման գործակալութիւնը կ'աջակցի թանգարանի բացման: Թանգարանը կը ցուցադրէ Վաքըֆլի մշակույթի, լեզուի, պատմութեան, խոհանոցի, պարերու վերաբերեալ տեղեկութիւններ:

«Իրականութեան մէջ գիւղական այս թանգարանով կը պատրաստուինք պատմել եւ հայկականութեան մասին: Որովհետեւ համայնարան աւարտած մարդիկ կու գան եւ կը հարցնեն թէ արդեօք Անատոլիոյ մէջ եղած հայկականութեանը ազգ է, թէ կրօն, արդեօք այստեղի հայերը Հայաստանէն եկած հայեր են, ինչ եղաւ հայերու հետ: Մենք կարիք ունինք պատմելու».- նշած է Չափարը:

Վաքըֆլի հայկական եկեղեցոյ վանահայր Աւետիս Թաբաշեան նշելով, որ մինչեւ 1939 թ. Հաթայը եղած է Ֆրանսայի իշխանութեան տակ, աւելցուցած է, որ Մուսա լեռան ստորոտին Վաքըֆլի պէս 6 գիւղ եղած է, սակայն Հաթայի երկրամասի՝ Թուրքիոյ միանալէ ետք շրջանի հայերու մէկ մասը գաղթած է երկրամասէն, մաս մըն ալ տեղափոխուած է Վաքըֆլի. «Վաքըֆլի մէջ 35 հայ ընտանիք կ'ապրի, սակայն մեծամասնութիւնը արտասահմանի մէջ է: Մեր գիւղին մէջ զրազիտութեան մակարդակը 99 տոկոս է: Եկեղեցոյ մէջ պատարագները հայերէն կը մատուցենք: Գիւղն ունի իւրաքանչիւր լեզու: Այստեղ բնակողները գիտեն եւ արեւելահայերէն, եւ արեւմտահայերէն, բայց արաբերէն եւ հայերէն խառնուրդով պարպարը (բառբառ) մեր յատուկ լեզուն է: Այստեղ բոլորը գիտեն այդ լեզուն».- yerkir.am-ի փոխանցմամբ, նշած է Թաբաշեան:

«Մեծ Եղեռն. Հայոց Յեղասպանութենէն Մէկ Դար Անց» Խորագիրով Համաժողով՝ Իտալիոյ Մէջ



Ապրիլ 16-ին, Իտալիոյ Պատգամաւորներու պալատի «Սալվատոր» սրահին մէջ տեղի ունեցաւ «Մեծ Եղեռն. Հայոց Յեղասպանութենէն մէկ դար անց» խորագիրով համաժողովը՝ կազմակերպուած Պատգամաւորներու պալատի Իտալիա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խումբի անդամներուն կողմէ: Այս մասին կը տեղեկացնեն ՀՀ ԱԳՆ տեղեկատուութեան վարչութիւնէն:

Համաժողովին, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Իտալիոյ մէջ ՀՀ դեսպան Վիքթորիա Պաղտասարեանը՝ շնորհակալութիւն յայտնելով պատգամաւորներուն Ապրիլ 10-ին Պատգամաւորներու պալատին մէջ Հայոց Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ որոշման ընդունման համար: Դեսպանը նշեց, որ Հայոց Յեղասպանութեան միջազգային դատապարտման ու ճանաչման գործընթացը շարունակական է, որ պէտք է լուրջ ազդակ ըլլայ առ այն, որ այդ հարցով ժխտողական կեցուածքը ոչ մէկ ձեւով կը տեղա-

ւորուի 21-րդ դարու արժեհամակարգային իրողութիւններուն մէջ: Ան աւելցուց, որ այս քայլով՝ Իտալական կողմը վերահաստատեց ՄԱԿ-ի Յեղասպանութեան յանցագործութիւնը կանխելու եւ ատոր համար պատիժի մասին պայմանագիրով ստանձնած իր յանձնառութիւնները եւ պարտաւորութիւնները ու հաւատարմութիւնը համամարդկային արժէքներուն:

Ելոյթներով հանդէս եկան Իտալիոյ քաղաքական, գիտական, մշակութային շրջանակներու շարք մը ներկայացուցիչներ, որոնք իրենց ելոյթներով ընդգծեցին Հայոց Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ որոշման ընդունման կարեւորութիւնը Իտալիոյ հասարակական-քաղաքական շրջանակներուն մէջ Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ իրազեկուածութեան բարձրացման եւ ապագային նմանատիպ յանցագործութիւններու կանխարգիլման գործին մէջ:

Հայոց Յեղասպանութեան Թանգարան Հիմնադրանք Հանդէս Պիտի Գայ Բետաքրքրական Նախաձեռնութիւններով



Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկ հիմնադրամը՝ տարուան ընթացքին՝ կը նախատեսէ իրականացնել միջազգային գիտաժողովներ, հրատարակել ցեղասպանագիտական հանդէսներ, իրականացնել մեթոտական սեմինարներ, ժամանակաւոր եւ հիմնական ցուցադրութիւններ:

Այս մասին Ապրիլ 17-ին լրագրողներու հետ հանդիպման մը ընթացքին ըսած է Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկ

հիմնադրամի տնօրէն, պատմական գիտութիւններու դոկտոր Յարութիւն Մարութեան:

«Նպատակս է կարգաւորել թանգարան-հիմնարկի աշխատանքները եւ անոնց նոր լիցք հաղորդել: Իմ պաշտօնավարման կարճ ժամանակահատուածին թանգարան-հիմնարկին մէջ տեղի ունեցած են մասնաւորապէս կառուցուած քային փոփոխութիւններ. յստակացած են

Organized by the Homenmen Ladies Auxiliary

Mothers Day BRUNCH

Saturday, May 4, 2019
At 11:00 am - 3:00 pm

BABYLON MEDITERRANEAN RESTAURANT
162 N. Sierra Madre Blvd., Pasadena

Donation: \$60

For tickets please call
Karine (818) 324-0574

Նոր Գիրքեր «Սուրիոյ Հայ Համայնքի Պատմութիւնը 1946-1970 թթ.» (Հեղինակ՝ Անի Ֆիշենկճեան)

ԱԽԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ

Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիոյ պատմութեան բաժանմունքի գիտական խորհուրդին որոշումով, 2018-ին լոյս տեսաւ պատմաբան Անի Աւետիսի Ֆիշենկճեանի վերոնշեալ խորագիրը կրող մենագրութիւնը: Անժխտելի է, որ հայ գաղթօճախներու պատմութիւնը անբախտելի մէկ մասն է հայոց ընդհանուր պատմութեան, աւելին, հայ կեանքի բազմաթիւ նշանակալից իրադարձութիւններ տեղի ունեցած են Հայաստանի բնական սահմաններէն հեռու վայրերու մէջ. գաղթօճախները, հակառակ աշխարհագրական իրենց հեռաւորութեանց եղած են հետամուտ եւ մասնակից հայրենական կեանքին բուն իրադարձութեանց: Եւ ուրեմն, զարմանալի չէ, որ Հայաստանի գիտական կաճառին պատմութեան բաժանմունքը յատուկ հետաքրքրութիւն կը ցուցաբերէ արտերկրի հայ գաղութներուն շուրջ, ստեղծելով սփիւռքահայութեան պատմութեան ուսումնասիրման ճիւղ՝ իր մասնագէտներով եւ գիտաշխատողներով: Արդէն սփիւռքագիտութիւնը դարձած է ինքնուրոյն ոլորտ պատմաբաններու համար: Այդ գիտաշխատողներէն է նախկին հայկազայ ուսուցիչ, այժմ Երեւան հաստատուած, դասախօս, պատմական գիտութիւններու թեկնածու Ա. Ֆիշենկճեանը:

343 էջէ բաղկացած հատորը ունի ներածական մը եւ չորս գլուխ: Անտարակոյտ, Սուրիան եւ իր հայ գաղութը խիստ էական նշանակութիւն ունեցած են մեր պատմութեան մէջ որպէս հարեան երկիր, անոր ժողովուրդը՝ բարեկամ եւ հիւրընկալ, հայութիւնը՝ կենսունակ եւ հոծաթիւ: Հեղինակը ներածականին մէջ համառօտակի կ'անդրադառնայ գաղութին պատմութեան, 1920-ականներուն անոր բազմացման պատճառներուն եւ կազմաւորման պայմաններուն, իր ուսումնասիրած ժամանակաշրջանին՝ 1946-1970 թուականներուն վերաբերող պատմագիտական աշխատութեանց (ուր անշուշտ աչքի կը զարնեն յատկապէս Արտաւազդ Արք. Սիւրմէեանի, Արշակ Ալպոյաճեանի, Ա. Աբրահամեանի, Յ. Թօփուղեանի, Վարդան Արք. Տէ միրճեանի, Ն. Յովհաննիսեանի, Բ. Եղիայեանի, Կ. Դալլաքեանի, Յ. Մելիքեանի, Ռ. Ճէպէճեանի, Յ. Չոլաքեանի, Գ. Եսգըճեանի գործերը), մամուլին, արխիւներու, տեղեկագիրներու եւ անտիպ աշխատութեանց:

Առաջին գլուխը՝ «Սուրիահայութիւնը Բ. Աշխարհամարտի Նախօրեակին» (էջ 29-79) կը բաղկանայ հինգ ենթամասերէ, ուր համապարփակ կերպով կը ներկայացուի սուրիահայութեան իրավիճակը՝ երկիրը փոթորկող զարգացումներուն գուգահեռ, երբ Սուրիա Բ. Աշխարհամարտին ականատես ըլլալու կողքին՝ ազատագրական պայքար կը մղէր ֆրանսական գաղութատիրութեան դէմ: Ալեքսանտրեթի սանճաքին հարցը, հայ համայնքին յարափոփոխ թուաքանակը, ընկերային-տնտեսական, համայնքային-կրթական խնդիրները, տեղացիներու եւ գաղութարարներուն հետ յարաբերութիւնները կը գտնուին լուսարձակի տակ: Հետաքրքրական է հայութեան դիրքը

այս փոթորկալի շրջանին եւ այն վայրերը, ուր տեղակայուած են հայ համայնքները՝ Լաթաքիայէն Գամիշլի, Հոմս եւ Համա, ճէզիրէի շրջանէն մինչեւ Քեսապ ու Դամասկոս: Ինչքան զիւ դերու եւ աւաններու անուններ արձանագրուած են սուրիահայութեան պատմութեան մէջ: Նշելի է «Հայերը Սուրիական Բանակին Մէջ» բաժինը, ուր մեծանուն գիտնորական Արամ Գարամանուկեանի կողքին կը կարդանք անունները Հրանդ Մալոյեանի, Ժողէֆ Պալլամեանի, Վառձապուհ Սալաթեանի (նահատակ), Ալպէս Քիլճեանի, Աւետիս Արսլանեանի, Գրիգոր Հինտոյեանի եւ այլոց անունները: Իր հերթին, համայնքային կեանքին եւ Սուրիոյ թեմերուն շուրջ անդրադարձը կը պարզէ այն դէպքերը, որոնք առնչուած են Բերիոյ, Դամասկոսի, ճէզիրէի վիճակներուն, ներքին եւ քաղաքական հակասութեանց, թեմակալ առաջնորդներուն, թեմերուն կառուցուածքին եւ կաթողիկէ ու աւետարանական համայնքներուն: Երկրորդ գլուխը՝ «Սուրիահայերը Երկրի Անկախութենէն Ետք (1946-1970 թթ.)» (էջ 81-141) ունի վեց ենթամաս: Այս համապարփակ ակնարկ մըն է Սուրիոյ ռազմաքաղաքական յաջորդական ցնցումներուն եւ անոնց հետեւանքներուն՝ հայ կեանքին վրայ՝ քաղաքական, կրթական, կազմակերպչական առումներով: Սահմանափակումներ, ճնշումներ դպրոցներու եւ մամուլի վրայ, լեզուի եւ կրօնքի հարցեր, երբեմն անհարկի հարածանքներ պատճառ կը դառնան գաղութին տկարացման, արտագաղթի, տնտեսական հարուածներու, ազգային եւ բարոյական ընկրկումներու: Հայեր կը ներգրուուին քաղաքական կեանքին, արհեստներու, առեւտրի, շինարարութեան մէջ կ'արձանագրեն նկատառելի յաջողութիւններ, բայց Ապտէլ Նասէրի շրջանը կը յատկանշուի իր ծանր մթնոլորտով: Ապա՝ հայ կուսակցութեանց գործունէութիւնը, քաղաքական հայ եացքները կը կարդանք հետաքրքրութեամբ. «Սուրիոյ հայ ազգային կուսակցութիւններու երկրորդ իր անդամներով կը հանդիսանար Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը» (էջ 114): «1960-ական թուականներուն հայերը Հայկալի բնակչութեան մէկ հինգերորդ մասը կը կազմէին» (էջ 127): Ինչպիսի անուններ նուաճած են հեղինակութիւններ յատկապէս տնտեսական, պետական, արդիւնաբերական, շինարարական, առեւտրական, բժշկական, ելեւտական բնագաւառներէ ներս: Ակնարկ կայ նաեւ մշակութային ոլորտին, երբ Սուրիա-Խ. Միութիւն լաւ յարաբերութիւններու մէջ էին, Խ. Հայաստանսուրիահայութիւն մշակութային կապերը կ'արձանագրէին զգալի յաջողութիւններ:

Երրորդ գլուխը համահայկական եւ այժմէական հարցի մը մասին է՝ «Սուրիահայերու Հայրենադարձութիւնը 1946-1970 թթ.», որ ունի երեք ենթամաս: Վիճակագրական տուեալներով, հեղինակը ցոյց կու տայ հայոց ներգաղթը թուականներով, թիւերով եւ վայրերով: Աննախընթաց խանդավառութիւն կը տիրէ սուրիահայոց մօտ՝ Հայկալի Գամիշլի, Քեսապէն


Տըրպեսիէ, Ռաքքա, Դամասկոս, ուր հազարաւորներ կ'արձանագրուին վերադառնալու հայրենիք: Բ. Աշխարհամարտէն ետք եւ Պոյ տամի խորհրդաժողովէն յետոյ, մեծ յոյսեր կային Արեւմտահայաստանի կցումին՝ Խ. Հայաստանի, ինչոր ոգեւորութիւն ստեղծած էր ամէնուր: Սուրիոյ մէջ կը կազմակերպուին ներգաղթի մարմիններ, ընտանիքներ կը վաճառեն ամէն ինչ՝ միանալու ներգաղթող կարաւաններուն: Կը պատահին նաեւ քաղաքական տարակարծութիւններ, անախորժութիւններ, երբեմն՝ հիասթափութիւններ: Այս աննախադէպ զօրաշարժը կը մտահոգէ նոյնիսկ Սուրիոյ կառավարութիւնը, որ պիտի զրկուէր հայ ձեռներէց եւ գործունէաց տարրէն: Սուրիահայութեան գանգուածային հայրենադարձութիւնը տեղի կ'ունենայ երկու փուլով՝ 1946-1948 թ. եւ 1962-1970 թ.: Երկու ուշագրաւ փաստ. «Հետաքրքիր էր այն փաստը, որ ցուցակագրման աշխատանքներու ընթացքին կոմիտէն դիմումներ կը ստանար նաեւ ասորիներէ եւ արաբներէ, դէպի Խորհրդային Հայաստան տեղափոխուելու խնդրանքով» (էջ 151) եւ «Ներգաղթել ցանկացողներուն ցուցակագրման առաջին երկու օրերուն Դամասկոս 1800 հայ ընտանիքներէն շուրջ 1000 կ'արձանագրուին: Իսկ Հայկալի շրջակայքը ապրող հայ ազգաբնակչութեան՝ 92 տոկոսը (15.500 ընտանիք, 75.000 մարդ) (էջ 152): Պէտք է տեսնել այն համազգային զօրաշարժը, որ ստեղծած էր ներգաղթը, մանաւանդ Սուրիոյ գիւղաբնակ, համեստ, աշխատաւոր եւ արհեստաւոր խաւերուն մօտ, ինչ-




պէս նաեւ քրտախօս եւ արաբախօս հայոց մօտ, որոնք հոգեպէս կապուած էին Հայաստանին: Այս բաժինը օգտակար կրնայ դառնալ հայրենադարձութեան պատմութեամբ զբաղող մասնագէտներու համար: Վերջապէս, երեւոյթը ինքնատիպ էջերէն մին է հայոց պատմութեան: Հոն կը կարդանք նաեւ հայրենադարձներուն նպաստը Հայաստանի զարգացման եւ հզօրացման, ուր կան անունները Լեւոն Տէր Պետրոսեանի եւ Լիբանանի մէջ Հայաստանի առաջին դեսպան Երուանդ Մելքոնեանի: Վերջին գլուխը ամենաընդգրկունն է՝ «Սուրիահայ Մշակութային Կեանքը» (էջ 185-300): Ունի 9 ենթամաս: Լայնօրէն անդրադարձ կայ կրթական մարզին՝ իր դժուարութիւններով, հայոց լեզուի ու պատմութեան ուսուցման պետական խոչընդոտներով, անուններով եւ պիւտճէներով: Նաեւ Կիրակնօրեայ դպրոցներու գործունէութիւնն ու լայն ցանցը դարձած է ուշադրութեան արժանի: Անկասկած, մշա-

Շար.ը էջ 19

VA Print Media



Book Printing & Binding • Hard Covers
College Dissertations • Year Books
Restoration of Old Books & Bibles
Newspaper Archiving



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220
Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com
www.vaprintmedia.com

Առաջ Գնալու Համար Պետք է Հետ Նայել

Շարունակուած էջ 2-էն

պէտք է հասարակութեանը կրկին իւրաջիններ իւր միւսները բաժանել: Դա ոչ միայն վտանգաւոր է կարճաժամկէտ կտրուածով, այլ աւելի երկար ժամակահատուածի համար, քանի որ այն լարձուն իրավիճակը, որն ունէինք ոչ վաղ անցեալում, կարող է էլ՝ աւելի վտանգաւոր դրսեւորումներով կրկնուել ե՛ւ ներկայում, ե՛ւ ապագայում:

Ուստի, հարկաւոր է հաւաքել բոլոր ոլորտներէ մասնագէտներին ու նրանց համապատասխանաբար ուղղորդել այն կառուցներ, որտեղ դեռ անցեալից մնացած հին ու փտած աւանդոյթներով են ապրում եւ գործում: Ո՛չ թէ մի աթոռից վերցնել ու միւս աթոռին տեղաւորել, ինչ է, թէ նրա շուրջ միակի ու անկրկնելի լեզենդ է

յօրինուած ու հրամցուած: Յարգելի իշխանաւորներ, բազմիցս կրկնել ենք, հիմա էլ չենք վարանում ասել, որ կան ոլորտներ՝ էներգետիկա, գիւղատնտեսութիւն, մշակոյթ եւ այլն, որոնք սիրողական մտեցում չեն սիրում:

Ուստի, եթէ իսկապէս ցանկութիւն կայ հասկանալու, թէ ինչպէ՞ս է պատահել, որ հոսանքի մէկ կիլովատի արժէքը հասել է աստղաբաշխականի, ինչպէ՞ս է պատահել, որ գազի ոլորտին պատկանող ողջ տնտեսութիւնը դարձել այլ պետութեան սեփականութիւնը: Սրանք հասկանալու համար հարկաւոր է աւելի խորը վերլուծել անցեալը ու յետոյ միայն հետեւութիւններ անել: Հակառակ դէպքում կրկին կ'ունենանք մի իրավիճակ, երբ ուզում էինք աւելի լաւ, բայց ստացուեց՝ ինչպէս միշտ: «ՕՐԵՐ.am»

Հայոց Յեղասպանութեան Թանգարան

Շարունակուած էջ 14-էն

բաժիններու գործառնոյթները, ձեւաւորուած են նոր բաժիններ: Այսօր թանգարանին մէջ կայ երեք գիտահետազոտական բաժին՝ յուշագրութիւններու, վաւերագրի եւ մամուլի ուսումնասիրութեան, Հայոց Յեղասպանութեան զոհերու փաստագրման եւ տուեալներու հաւաքագրման, համեմատական ցեղասպանագիտութեան բաժին», - նշած է ան:

Անդրադառնալով գիտահետազոտական աշխատանքներուն՝ Մարութեան ըսած է, որ ձեւաւորուած է նոր գիտահետազոտական խորհուրդ: Աւելի քան մէկ տարի գիտական խորհուրդը չէ գործած, սակայն հիմա արդէն իսկ իրականացած է երկու նիստ:

Խօսելով հանդէսներուն մասին՝ տնօրէնը չի շեղուցած է, որ ցեղասպանագիտական հանդէս-պարբերականը, որ կը հրատարակուի տարին երկու անգամ, 2018-ին լոյս չէր տեսած: «Մենք մէկ ելեկտրոնային տարբերակ հրատարակած ենք նախորդ տարուան վերջը, իսկ թղթային տարբերակով՝ քանի մը շաբաթ առաջ: Այս տարի եւս երկու ցեղասպանագիտական հանդէս պիտի հրատարակենք, մէկը՝ անգլերէն: Այդ ամսագրերը համապատասխանեցուցած ենք միջազգային չափանիւններուն», - շեշտած է ան:

Թանգարանը կը նախատեսէ, տարուան ընթացքին, իրականացնել առնուազն մէկ միջազգային գիտաժողով: Այս տարուան Նոյեմբերին պիտի կազմակերպուի «Հայոց փրկութեան գործը Մերձաւոր Արեւելքի մէջ. 1915-23 թուականներ» միջազգային գիտաժողովը:

Յաջորդ տարի պիտի իրականացուի միջազգային գիտաժողով Գանատայի մարդու իրաւունքներու թանգարանին եւ լեհական Փիլեզի ուսումնարանին հետ համագործակցութեամբ:

Յարութիւն Մարութեան կարեւոր համարած է գիտացուցադրական աշխատանքները եւ նշած, որ նախորդ տարի եղած է հինգ ժամանակաւոր ցուցադրութիւն: «Կը նախատեսենք Ապրիլ 23-ին բանալ «Հայոց Յեղասպանութեան 150-ամեայ վկաները. Կոմիտաս վարդապետ եւ Յովհաննէս Թումանեան» խորագրով ցուցադրութիւնը, գիտաժողովներու դահլիճին կից, նախատեսուին մէջ, պիտի ստեղծենք մշտապէս գործող փոքր պատկերասրահ, ուր պիտի ցուցադրենք ֆրանսահայ գեղանկարիչ Ժանսեմի աշխատանքները, որոնք ան նուիրած է թանգարանին», - յայտնած է տնօրէնը:

Ան տեղեկացուցած է, որ նպատակ ունին թանգարանին մէջ նոր ուղղութիւն՝ օսմանագիտութիւն մտցնելու: «Գաղտնիք չէ, որ ցեղասպանութեան վերաբերող փաստաթուղթերուն մեծ մասը օսմաներէն է: Հայաստանի մէջ քիչ մասնագէտներ կան, որոնք կը կարդան ձեռագիր օսմաներէն: Մենք պիտի փորձենք՝ մասնագէտներու միջոցով՝ հասկնալ առկայ արխիւային նիւթերուն շրջանակը, յետոյ ձեռնամուխ ըլլալ անոնց թարգմանութեան ու հանրութեան լայն շրջանակին ներկայացնելուն», - եզրափակած է Յարութիւն Մարութեան:

Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկ հիմնադրամին մէջ, այսօր, կ'աշխատի 82 մարդ:

Թանգարանի «Մասնութեան Հրամաններ. Թալէթ Փաշայի Հեռագրերը եւ Հայոց Յեղասպանութիւնը» Գիրքը

Շարունակուած էջ 13-էն

հերքել եւ առաջ քաշել հակաթէզեր», - ընդգծած է Նալպանտեան:

«Ինչպէ՞ս որոշեցի գրել այս գիրքը. ամէն ինչ շատ պարզ է: 2015-ին ինձ թոյլ տուին տեսնել Գրիգոր Գերգերեանին պատկանող մասնաւոր արխիւը: Այնտեղ գտայ փաստաթուղթերը ու այդ պահէն ալ որոշեցի, որ պէտք է հրատարակել զանոնք: Ամենադժուարը օսմանեան կանոնաւորման համակարգէն եւ զարտնագրուած ձեռագիրներէն զլուխ հանելն էր: Օսմանեան պաշտօնեաները կ'օգտագործէին երկուքէն մինչեւ հինգ նիւնեցող կանոնակարգման համակարգեր գաղտնի հաղորդակցուելու համար: Վճռական պահը այդ կոնոնակարգման տրամաբանութիւնը հասկանալն էր: Ատոր համար շատ երկար ժամանակ ու շատ աշխատանք պէտք եղաւ», - տեսաուղեւորի միջոցով պատմեց գիրքին հեղինակ Թանգարանի Աքչամ:

Անոր խօսքով՝ սկիզբը ինքը կը ծրագրէր նոր գիրքով ներկայացնել Գերգերեանի արխիւի այն փաստաթուղթերը, որոնք տեղ չէն գտած այս գիրքին մէջ: «Խօսքը Պոլսոյ ռազմական դատարաններուն առնչուող փաստաթուղթերու մասին է, բայց որոշեցի բոլորովին այլ քայլ ընել: Բոլոր այն նիւթերը, որոնք հասանելի էին միայն ինձի եւ հասանելի դարձուցած եմ բոլորին: Անոնք կրնաք գտնել առցանց: Մենք փաստաթուղթերը դասակարգած, խմբաւորած ու ներկայացուցած ենք երեք բաժինով, օսմաներէն նիւթերը թարգմանած ենք անգլերէն եւ թրքերէն», - շեշտած է ան:

Աքչամ ըսած է, որ կ'աշխատի Հայոց Յեղասպանութեան կազմակերպման եւ իրականացման գործին մէջ ձեռնալ փաշայի դերը հասկնալու

նախագիծին վրայ: «Յայտնի է, որ ան Պոլսոյ մէջ երիտթուրքերու առաջնորդներէն մէկն էր: Խօսակցութիւններ կան, թէ ան փորձած է փրկել հայերու կեանքը: Կը փորձեմ հասկնալ, թէ անոր իրական դերը ինչ եղած է Հայոց Յեղասպանութեան տարիներուն», - եզրափակած է ան:

Հայոց Յեղասպանութեան ժխտման թրքական գլխաւոր փաստարկն այն է, որ տեղահանութեան հրամանէն բացի այլ հրաման չէ եղած, հետեւաբար հայերը մահացած են, բայց ոչ սպանուած: Մինչդեռ Թուրքիոյ ներքին գործոց նախարար Թալէթ անձամբ ղեկավարած է հայերու տեղահանումն ու ջարդը: Այդ հրամանները ան ձեռագրած է նաեւ Հալէպի մէջ աշխատող թուրք պաշտօնեաներէն Նալիմ պէյին: Նալիմ պէյի հետ Հալէպի մէջ կը ծանօթանայ Տէր Զօրի անապատով անցած եւ հրաշքով փրկուած Արամ Անտոնեանը: Ան թուրք պաշտօնեային կաշառելով ձեռք կը բերէ պատմական փաստաթուղթերը՝ Թալէթի ձեռագիրները, ուր Թալէթ կը հրամայէր սպաննել հայերը: Արամ Անտոնեան 70-է աւելի փաստաթուղթերը Հալէպէն կը տեղափոխէ Փարիզ եւ 1921-ին գիրք կը հրատարակէ: Անտոնեան բոլոր փաստաթուղթերը կը յանձնէ Փարիզի Պօղոս Նուպար գրադարանին: Փաստաթուղթերը գրադարանէն կ'անհետանան, սակայն երջանիկ պատահականութեամբ հայ կաթողիկոս հոգեւորական Գրիգոր Գերգերեան 1950-ականներուն պատճէնած էր զանոնք ու իր հետ տարած Միացեալ Նահանգներ: Այդ եզակի արխիւը ոչ ոք ուսումնասիրած էր: Պատմաբան Թանգարանի Աքչամ 2015 թուականին կը կապուի Գերգերեանի ժառանգներուն հետ եւ կը հասնի այդ արխիւին:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 massis2@earthlink.net



Legacy Realty

Nick Karasarkisian
 Broker - CalBRE # 01022153

2275 Huntington Dr., #117
 San Marino, CA 91108
 Phone: 213.706.9990
 e-mail: nickkarasarkisian@gmail.com
 www.legacyrealtyca.com



ՄԱՐՉԱԿԱՆ

Ռոնալդուն Անգլիայի, Սպանիայի եւ Իտալիայի Ախոյեան Դարձած Առաջին Ֆուտբոլիստն է

Պորտուգալացի Կրիշտիանու Ռոնալդուն դարձավ պատմութեան մէջ առաջին ֆուտպոլիստը, որն ունի Անգլիայի, Սպանիայի եւ Իտալիայի Ախոյեանի կոչումները: Անցած ամրան Իտալիա տեղափոխուած 34-ամեայ ֆուտպոլիստը Թուրինի «Եուլթենտուսի» հետ նուաճեց առաջին ախոյեանական տիտղոսը: Ալեգրիի գլխավորած թիմն 8-րդ տարին անընդմէջ դարձավ Իտալիայի ախոյեան: Ռոնալդուն տիտղոսը նուաճելուց յետոյ յայտարարել է, որ յաջորդ մրցաշրջանում էլ կը լինի Թուրինում:



Ռոնալդուն երեք անգամ Անգլիայի ախոյեան է դարձել «Մանչեսթեր Եունայթեդի» հետ, երկու անգամ՝ Սպանիայի ախոյեան Մադրիդի «Ռեալի» հետ:

Իտալիայի առաջնութիւնում Ռոնալդուն մասնակցել է 27 հանդիպման, խփել 19 կոլ, կատարել 8 կոլային փոխանցում: Նրա պայմանագիրը «Եուլթենտուսի» հետ նախատեսուած է մինչեւ 2022 թուականը:

«Մանչեսթեր Սիթի» - «Տոտենհեմ»՝ 1:0. Ախոյեանական Մրցավազքը Շարունակուում է

Անգլիայի Պրեմիեր լիգայի 35-րդ տուրում «Մանչեսթեր Սիթին» սեփական յարկի տակ ընդունեց «Տոտենհեմին»:

Մի քանի օր առաջ այս թիմերը մրցում էին Ախոյեանների լիգայի քառորդ եզրափակում, որտեղ, չնայած պարտութեանը, կիսաեզրափակիչ դուրս եկան լոնտոնեան ակումբի ֆուտպոլիստները:

Այսօրուայ խաղում Գուարդիոլայի թիմը վստահ տեսք ունէր ու կարողացաւ փոքր վրէժ լուծել լոնդոնցիներին՝ յաղթելով 1-0 հաշուով:

«Լիվերպուլը» Վերադարձաւ Առաջին Տեղ

«Լիվերպուլը» 2:0 հաշուով արտագնայ յաղթանակ տարաւ «Կարդիֆի» նկատմամբ եւ 88 միաւորով վերադարձաւ առաջին տեղ: Երկրորդ տեղ նահանջած «Մանչեսթեր Սիթին» ունի 86 միաւոր, սակայն մէկ հանդիպում պակաս է անցկացրել:

«Արսենալը» Պարտուեց «Քրիստալ Փելասին», Միխթարեանը Խաղալու Շանս Չստացաւ

Անգլիայի ֆուտբոլի Պրեմիեր լիգայի 34-րդ տուրի խաղում Լոնտոնի «Արսենալը» սեփական դաշտում պարտուեց «Քրիստալ Փելասին»:

Խաղի 17-րդ րոպէին Բենտեկեն առաջ մղեց հիւրերին: Ընդմիջումից երկու րոպէ անց Օզիլը հաւասարեցրեց հաշիւը, սակայն 61-րդ եւ 69-րդ րոպէներին Ջամս ու Մաք-Արթուրը հաշիւը դարձրին 1:3: Խաղաւարտից 13 րոպէ առաջ Օբամեյանգին յաջողուեց կրճատեց գնդակների տարբերութիւնը՝ 2:3:

«Արսենալի» կազմում հանդէս եկող Հենրիխ Միխթարեանը, որն այս անգամ յայտաւորուել էր պահեստայինների թւում, այդպէս էլ փոխարինման չմտաւ եւ խաղալու շանս չստացաւ:

Չնայած անսպասելի պարտութեանը, արսենալցիները 66 միաւորով շարունակում են զբաղեցնել 4-րդ տեղը, որը ախոյեանների լիգայի ուղեգիր է տալիս: «Քրիստալ Փելասն» այս յաղթանակից յետոյ վաստակեց 42 միաւոր եւ բարձրացաւ 12-րդ հորիզոնական:

ՊՍԺ-ն Ապահովեց Ֆրանսայի Ախոյեանի Տիտղոսը

Փարիզի ՊՍԺ-ն ժամանակից շուտ ապահովեց ֆուտպոլի Ֆրանսայի ախոյեանի տիտղոսը: Ֆրանսայի առաջնութեան 33-րդ տուրում երկրորդ տեղում գտնուող «Լիլը» հիւրընկալուելիս կոլագուրդ ոչ ոքի խաղաց «Թուլուզի» հետ եւ զրկուեց առաջատար ՊՍԺ-ին հասնելու հնարաւորութիւնից:



Մէկ հանդիպում պակաս անցկացրած ՊՍԺ-ն ունի 81 միաւոր, իսկ «Լիլը»՝ 65: Ապրիլի 21-ին ՊՍԺ-ն կընդունի «Մոնակոյին»:

Փարիզեան ակումբը Ֆրանսայի ախոյեան դարձաւ 8-րդ անգամ եւ 6-րդ տարին անընդմէջ:

Համահայկական Խաղերի Բացումը՝ Ստեփանակերտում, Փակումը՝ Երեւանի Ազատութեան Հրապարակում

Օգոստոսի 5-17-ը Հայաստանում եւ Արցախում տեղի կ'ունենան 7-րդ ամառային Համահայկական խաղերը: Այս տարի կը նշուի խաղերի 20-ամեակը: Բացման հանդիսաւոր արարողութիւնը եւ մրցումային 3 օրերը կ'անցկացուեն Ստեփանակերտում, իսկ մրցումային չափորդ օրերը՝ Օգոստոսի 9-17-ը՝ Երեւանում: Համահայկական ամառային 7-րդ խաղերի բացման հանդիսաւոր արարողութիւնը տեղի կ'ունենայ Օգոստոսի 6-ին Ստեփանակերտի Ստեփան Շահումեանի անուան հանրապետական մարզադաշտում, իսկ փակումը՝ Օգոստոսի 17-ին, Երեւանում՝ Ազատութեան Հրապարակում:



Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտէի նախագահ Իշխան Ջաքարեանի գլխավորած պատուիրակութիւնը Արցախում է: Ստեղծագործական խումբը տեղում է ճշտում անելիքները: Իշխան Ջաքարեանի խօսքով՝ ամառային խաղերը կ'անցնեն բարձր մակարդակով: Դրանք Արցախում անցկացնելու առաջարկը կոմիտէն ընդունել է միաձայն:

«Արցախում անցկացնելն ունի նաեւ այն նշանակութիւնը, որ համահայկական խաղերի նշանաբանը՝ «Հայաստան, Արցախ, Սփիւռք» եռամիասնութեամբ, սպորտի միջոցով միասնականութեամբ, համերաշխութեամբ սիրոյ գաղափարների տարածումն է, թեւաւորումը ամբողջ համայն հայութեան շրջանում», - ասել է կոմիտէի նախագահը, փոխանցում է կազմակերպութեան մամուլի ծառայութիւնը:

Համահայկական ամառային խաղերին կը մասնակցեն սփիւռքի աւելի քան 35 քաղաքների ներկայացուցիչներ: 17 մարզաձեւից 12-ի մրցումները նախատեսուած են անցկացնել Արցախում: Մինչ այդ կը կահաւորեն դահլիճներն ու մարզահրապարակները:

Համահայկական 7-րդ ամառային խաղերի կազմակերպիչները Ստեփանակերտում հանդիպել են Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի, պետական նախարար Գրիգորի Մարտիրոսեանի հետ: Առաջին աշխատանքային խորհրդակցութեանը մասնակցել են ֆեդերացիաների ներկայացուցիչներն ու շահագրգիռ մարմինների պատասխանատուները:

«Արսենալը» Կրկին Յաղթեց «Նապոլիին»

Լոնտոնի «Արսենալը» ֆուտպոլի եւրոպայի լիգայում քառորդ եզրափակիչ պատասխան խաղում յաղթեց իտալական «Նապոլիին»՝ 1:0: Նեապոլում կայացած հանդիպման միակ կոլը 36-րդ րոպէին իսկեց Ալեքսանդր Լիակա-զետը: Այդպիսով, «Արսենալը» երկրորդ անգամ յաղթեց մրցակցին (առաջինը՝ 2:0) եւ մտաւ կիսաեզրափակիչ:



«Արսենալում» հանդէս եկող Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Միխթարեանն յայտաւորուել էր պահեստայինների թւում, սակայն արդէն առաջին խաղակէսի 34-րդ րոպէին նա մտաւ խաղադաշտ՝ փոխարինելով վնասուած ք ստացած Արոն Ռեմգիին:

Ֆաբիո Ֆոնչինին՝ Սոնտէ Կարլոյի Մրցաշարի Յաղթող

Մոնտէ Կարլոյում աւարտուած թենիսի «Մասթերս-1000» մրցաշարի յաղթողի կոչումը նուաճեց իտալացի Ֆաբիո Ֆոնչինին:

Եզրափակիչում աշխարհի 18-րդ ռակետը 2 սեթում ուժեղ գտնուեց սերբ Դուշան Լալովիչից՝ 6:3, 6:4: Մրցախաղը տևեց 1 ժամ 36 րոպէ:

Սա 31-ամեայ իտալացու առաջին տիտղոսն էր «Մասթերս» շարքի մրցաշարերում: Կիսաեզրափակիչում նա պարտութեան էր մատնել աշխարհի երկրորդ ռակետ Ռաֆայել Նադալին, որը նախորդ 3 տարիներին նուաճել էր Մոնտէ Կարլոյի մրցաշարի յաղթողի կոչումը:

